

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱ՝

ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԲՆՈՒՅԹԸ ՀՀ-ՈՒՄ, ԴՐԱ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Հեղինակ՝

Ադասի Թադևոսյան, ազգագրագետ, ԵՊՀ
Պատմ. գիտ. թեկնածու

ԵՐԵՎԱՆ 2009

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1. Կոռուպցիայի գնահատականները, ընկալումները, մոտեցումներն ու վերաբերմունքի հիմնական կողմերն ըստ քանակական տվյալների վերլուծությունը

- 1.1. Կոռուպցիայի գնահատականը և ընկալումը
- 1.2. Կոռուպցիոն վարքագծի և դրա պատճառների մասին պատկերացումները
- 1.3. Կոռուպցիոն գործողությունների դրդապատճառների բնույթը
- 1.4. Հակակոռուպցիոն պայքար և անձնական դիրքորոշում

ՄԱՍ 2. Կոռուպցիայի էությունը Հայաստանում և հակակոռուպցիոն պայքարի սկզբունքային որոշ դրույթներ

- 2.1. Կոռուպցիայի հիմնական որակական առանձնահատկությունները Հայաստանում
- 2.2. Իշխանության ձևավորում և կոռուպցիա
- 2.3. Կոռուպցիա և հնարավորությունների բևեռացում
- 2.4. Սոցիալական կապիտալ և կոռուպցիա
- 2.5. Հնարավորությունների բևեռացում և մարդկային զարգացում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվող վերլուծությունում , որը հենված է *“2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում ՀՌԿԿ իրականացրած կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության”* տվյալների բազայի վրա, անդրադարձ է կատարվում հետևյալ առանցքային խնդիրներին: Նախ փորձ է արվում վեր հանել կոռուպցիայի ընկալումների ու մեկնաբանությունների, ապա նաև դրանց ազդեցության տակ ձևավորված կոռուպցիոն վարքի առանձնահատկություններին վերաբերող հիմնախնդիրները: Նշված հարցերի վերլուծության մեջ, որպես կարևոր տեսանկյուն է դիտարկվում նաև կոռուպցիոն ընկալումների և վարքի, այսպես կոչված, *էթնոլշակության կոնտեքստի* որոշ առանձնահատկությունները և ՀՀ-ում *մարդկային զարգացման* վրա կոռուպցիայի ու դրա ընկալումների ազդեցության հիմնական առումները:

Հայաստանում, ինչպես և հասարակական հարաբերություններում սովորության խնդիրն ու ազգային ավանդույթներին կարևոր դեր տվող ցանկացած հասարակությունում, դժվար է գնահատել մի երևույթ, առանց դրան վերաբերող հասարակական ընկալումներն ու մեկնաբանությունները հաշվի առնելու: Այս առումով, կոռուպցիայի վերաբերյալ ՀՌԿԿ իրականացրած հանրային կարծիքի ուսումնասիրությունը անդրադառնում է բազմաթիվ հարցադրումների, որոնք վերաբերում են կոռուպցիայի, դրա բաղադրիչների և այն պայմանավորող գործոնների հասարակական ընկալումներին: Այս ընկալումները, հաճախ արտացոլում են տվյալ երևույթին հասարակությունում առավել տարածված մոտեցումները, հանդուրժողականության կամ անհանդուրժողականության աստիճանը, դրա վերաբերյալ ստերեոտիպային մեկնաբանությունները և տիպային վարքային մոդելները:

Ընդհանրապես, որևէ երևույթի գնահատման գործում կարևորագույն խնդիրը զարգացման վրա դրա բացասական ու դրական ազդեցությունների գնահատումն է:

Ներկայումս քաղաքակիրթ աշխարհում զարգացման տեսություններից առավել արդիականը համարվող *Մարդկային զարգացման կոնցեպցիայի* տեսանկյունից պետական, հասարակական և տնտեսական բոլոր հաստատությունների գլխավոր խնդիրը մարդու ազատությունների ու հնարավորությունների ընդլայնումն է: Այս առումով կոռուպցիայի հետազոտումն առանձնահատուկ տեսանկյուն է ձեռք բերում, քանի որ *կոռուպցիան դիտվում է որպես մարդու հնարավորությունների ու ազատությունների, այսինքն տվյալ պետությունում մարդկային զարգացումը սահմանափակող և խոչընդոտող երևույթ, որն առաջանում է իշխանության լծակները այն տիրապետող փոքրամասնության հնարավորություններին արտոնյալ կերպով ծառայեցնելու և բնակչության մեծամասնության հնարավորությունների սահմանափակման ու անհավասարության ձևավորման ճանապարհով*: Հետևաբար, փոխվում է կոռուպցիայի հաղթահարման կոնցեպտուալ կոնտեքստը՝ որպես

գլխավոր նպատակ հռչակելով ոչ միայն պարզապես կաշառակերության և կոռուպցիոն այլ երևույթների վերացումը կամ նվազեցումը մինչև վերհսկելիության սահմանագիծ, այլ կոռուպցիայի հաղթահարմանն ուղղված քայլերի միջոցով մարդու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնումը և մարդկային զարգացման համար նպաստավոր միջավայրի ձևավորումը:

Առաջարկվող հետազոտության նպատակն է ՀՌԿԿ “2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության” տվյալների բազայի վերլուծության միջոցով բնութագրել ՀՀ-ում առկա կոռուպցիայի բնույթը, ախտորոշել այն մարդկային զարգացման գործընթացի (մարդու հնարավորությունների ու ազատությունների աճի) տեսանկյունից և տալ Հայաստանում կոռուպցիայի հաղթահարման նպատակադրումներին, խնդիրներին ու հնարավոր ուղիներին վերաբերող առաջարկներ:

Կոռուպցիայի մակարդակը և երկրի ինքնուրույն զարգացման անկարողությունը փոխադարձորեն կապված երևույթներ են ու մեկը մյուսին պայմանավորող այդ “փակ շրջանը” ճեղքելու կարևոր նախապայմաններից մեկը հասարակական գիտակցության մեջ կոռուպցիայի վերաբերյալ գնահատականների ու վերաբերմունքի փոփոխությունների հետ է կապված: Կարևոր է հատկապես հասկանալ, թե հասարակությունում, յուրաքանչյուր անդամի մակարդակում, ինչպիսին է կոռուպցիայի վտանգավորության աստիճանի ընկալումը ոչ միայն ընդհանրապես երկրի զարգացման, այլ անձամբ իր ու իր երեխաների շահերի իրացման տեսանկյունից: Ահա այս տեսանկյունից ՀՌԿԿ իրականացրած հետազոտության տվյալների բազայի ուսումնասիրությունը մեզ կարող է թույլ նախ ախտորոշել ՀՀ կոռուպցիայի համակարգային և հասարակական ընկալումների առանձնահատկությունները և դրա հիման վրա վեր հանել.

- կոռուպցիայի տարածվածությունը ու բնույթը նկարագրող հասարակական գնահատականները և մեկնաբանությունները
- հասարակական ինստիտուցիոնալիզացիայի բնույթի, առկա սոցիալական կապիտալի որակների և կոռուպցիայի հաղթահարման առանձնահատկությունների միջև հնարավոր կապերը
- այս ոլորտում քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ մասնավորապես ՀԿ-ների խնդիրները: Խոսքը վերաբերում է ոչ միայն կոռուպցիայի դեմ պայքարի կոնտեքստում իրականացվելիք ակցիաներին ու ծրագրերին, այլ հասարակության անդամների մեջ կոռուպցիոն դրսևորումների դեմ անձնական անհաղորժողականության ձևավորմանն ու հանրային կառավարմանը մասնակցության աստիճանի բարձրացմանը
- նաև անհատական ընկալումների մակարդակում առկա առանձնահատկությունները:

Հիմնական հիպոթեզը և մեթոդաբանությունը

Հետազոտության հիմնական հիպոթեզն այն է, որ *կոռուպցիայի դեմ պայքարի ներկայիս քաղաքականության մեջ բաց է թողնված մի շատ կարևոր տեսանկյուն՝ մարդկային զարգացման տեսանկյունը*: Դա պայմանավորված է ինչպես պետական կառավարման մակարդակում նման նպատակադրման բացակայության¹, այնպես էլ հասարակական ու անհատական մակարդակում կոռուպցիայի ընկալումների հետ: Հետևաբար կոռուպցիայի հաղթահարման համար էական դեր կարող է խաղալ հասարակությունում դրա ընկալման փոփոխությունը, ինչը կարող է նպաստել, որ *մարդիկ կոռուպցիան ընկալեն իրենց անձնական շահերի հետ բախման կոնտեքստում՝ որպես մարդկային զարգացման խոչընդոտ, այլ ոչ միայն որպես հասարակական կամ պետական զարգացմանը վնասող չարիք*: Նման ընկալումը կարող է էական ազդեցություն ունենալ ինչպես հակակոռուպցիոն քաղաքականության լրամշակման ու վերանայման, այնպես էլ քաղաքականության իրականացման ու մոնիտորինգի գործընթացների վրա:

Այս վերլուծությունում կոռուպցիայի գնահատման նախնական մոտեցումն այն է, որ այն դիտվում է որպես երկրի *ինքնությունը զարգացումը* արգելակող հիմնական խոչընդոտ: Ըստ մեր նախնական հիպոթեզի կոռուպցիայի համատարած բնույթը պետական կառավարման համակարգը վեր են ածել առաջին հերթին այդ համակարգի վերին օղակներում տեղ զբաղեցնող անձանց ու խմբերի հարստության կուտակման ու վերարտադրության միջոցի: Կարելի է ասել, որ կոռուպցիայի առանցքային պատճառներից մեկն այն է, որ կառավարման համակարգի բոլոր օղակներում ներդրված են մեխանիզմներ, ու համապատասխան աշխատառձով չինովնիկներ, որոնց գործունեությունն ուղղված է մարդկանց համար հնարավորությունների սահմանափակումներ ու արհեստական արգելքներ ստեղծելուն, որոնց հաղթահարման ամենահարման ճանապարհը մարդկանց համար դարձել է կոռուպցիոն գործողության դիմելը: Տարօրինակ է, բայց փաստորեն, կոռուպցիան դարձել է պետական չինովնիկական համակարգի անօրինությունների հետևանքում մարդկանց սահմանափակվող հնարավորությունները քիչ թե շատ վերականգնելու ուղիներից մեկը, որը սակայն մինչույն ժամանակ այդ սահմանափակումներին խրոնիկ բնույթ հաղորդելով ստեղծում է փակ շրջան և վերարտադրում կոռուպցիա ծնող վարքային մոդելները:

Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել հակակոռուպցիոն պայքարի նախկին մոտեցումները՝ երևույթները նոր տեսանկյուններից ուսումնասիրելու, ախտորոշելու և կոնցեպտուալ առումով կոռուպցիայի հաղթահարման նոր առաջարկներ մշակելու ճանապարհով: Չի կարելի անտեսել կոռուպցիայի բնույթի, դրա հետ հասարակական

¹. Նկատի ունենք հատկապես ՀՀ զարգացման հիմնական ծրագրային փաստաթուղթ հռչակված “Կայուն զարգացման ծրագիրը”՝ ԿԶԾ-ն, որի կոնցեպտուալ հիմքը տնտեսական աճի գերակայությամբ տնտեսական զարգացման կոնցեպցիան է: Նկատի ունենանք, որ ներկայումս այն *զարգացման տեսությունների* մեջ համարվում է արդեն հնացած կոնցեպցիա: Steu` xâëîââ÷âñêîâ ðàçâèèèâ, îîâèâ èçîáðáíèâ ñîðèâèüü-ýêîüè÷-âñêîâî ïðîáðâñà, 1., 2006, ññ. 25-27, 38-40.

ընկալումների, դրսևորվող վարքի ու մարդկային զարգացման խնդիրների միջև առկա կապերը: Կոնցեպտուալ տեսանկյունից ներկայացված հետազոտական առաջարկում նորոյթն այն է, որ առաջարկվում է կոռուպցիայի գնահատումը ու դրա հաղթահարմանն ուղղված առաջարկների մշակումը իրականացնել մարդկային զարգացման հայեցակարգի կոնտեքստում:

Հետազոտությունը կիրականացվի ***երկաստիճան մեկնաբանության (ինտերպրետացիայի)*** մեթոդաբանությամբ, որում յուրաքանչյուր աստիճանը հենված կլինի վերլուծության տարբեր սկզբունքների վրա:

Երկաստիճան ինտերպրետացիայի մեթոդի համաձայն յուրաքանչյուր վերլուծական աստիճանը ունի իր ֆունկցիոնալ նշանակությունը:

Առաջին աստիճանի մեկնաբանությամբ վեր կհանվեն հետազոտվողների ինքնանկարագրությունն ամբողջացնող քանակական տվյալները և դրանցում առկա տիպիկ բնութագրումներն ու մեկնաբանությունները:

Երկրորդ աստիճանի մեկնաբանությունը կներառի երևույթի փորձագիտական վերլուծությունն ու լուսաբանումը:

Ինտերպրետացիայի առաջին աստիճանում հետազոտողի դիրքորոշումը որպես մեկնաբանող խիստ պասիվ է: Վերլուծության այս փուլում հետազոտողը փորձագիտական մեկնաբանությունները կենտրոնական դեր չունեն և իրականացվում է հարցվողների հաղորդած տվյալների պարզ նկարագրության ներկայացումը:

Ինտերպրետացիայի երկրորդ աստիճանում, հետազոտողն արդեն իրավունք ունի հենվելով առաջին աստիճանի տվյալների վերլուծության վրա, տալ փորձագիտական մեկնաբանություններ:

Վերլուծական այս մեթոդը թույլ է տալիս, մի կողմից, առանց հետազոտողի սուբյեկտիվ միջամտության հնարավորինս մաքուր ներկայացնել հասարակական կարծիքում առկա տվյալները, մյուս կողմից, ներկայացնել դրանք փորձագիտական մեկնաբանության տեսանկյունից: Այս մեթոդը թույլ է տալիս ունանալ միևնույն երևույթի տարբեր աստիճաններում գործող երկու մեկնաբանություն:

Առաջին աստիճանը վերաբերվում է երևույթին (կոռուպցիային) հետազոտվողի կողմից տրվող մեկնաբանությանը: Իսկ երկրորդ աստիճանում երևույթի վերաբերյալ հետազոտվողի տված մեկնաբանությունը և երևույթը մեկնաբանվում են հետազոտողի կողմից: Այս առումով առաջին աստիճանի մեկնաբանությունը բնույթով նկարագրական է, իսկ երկրորդ աստիճանինը՝ վերլուծական:

Առաջին աստիճանի մեկնաբանությունը կիրականացվի ՀՌԿԿ “Կոռուպցիայի հետազոտություն ՀՀ տնային տնտեսություններում” հետազոտության տվյալների հիման վրա: Տվյալների վերլուծության հիման վրա կբացահայտվեն կոռուպցիայի ընկալումները, դրա հետ կապված վարքային մոդելները, հասարակություն-իշխանություն փոխհարաբերությունները ներկայացնող մեկնաբանությունները, որոնք առկա են հետազոտության քանակական տվյալներում: Քանակական տվյալներից դուրս կբերվեն այնպիսի որակական բնույթի մեկնաբանություններ, որոնք թույլ կտան իրականացնել **երկրորդ աստիճանի** մեկնաբանությունը:

Մեկնաբանության երկրորդ աստիճանում կիրականացվի առաջինում իրականացված քանակական բնույթի տվյալների վերլուծության հիման վրա վեր հանված որակական հատկանիշների ու առանձնահատկությունների փորձագիտական վերլուծություն, որի հիման վրա կձևակերպվեն.

- ՀՀ-ում կոռուպցիայի հասարակական գնահատման ու ընկալման առանձնահատկությունները,
- կոռուպցիայի պատճառների վերլուծություն՝ ըստ այն պայմանավորող պետական կառավարման, հասարակական և անհատական, հարթություններում առկա գործոնների,
- կոռուպցիային արձագանքման հասարակությունում տարածված վարքային մոդելները և դրանց առանձնահատկությունները բնութագրող որակական գնահատականները,
- կոռուպցիայի գնահատականը մարդկային զարգացման կոնցեպցիայի տեսանկյունից,
- ըստ այդմ, զուգահեռներ կտարվի նաև կոռուպցիայի ընկալումների, հակակոռուպցիոն վարքագծի ու մարդկային զարգացման առկա խնդիրների միջև
- վերլուծության քանակական տվյալների ու փորձագիտական վերլուծության որակական գնահատականների հիման վրա կմշակվեն քաղաքականության համար կիրառելի առաջարկներ:

ՄԱՍ 1

Կոռուպցիայի գնահատականները, ընկալումները, մոտեցումներն ու վերաբերմունքի հիմնական կողմերն ըստ քանակական տվյալների վերլուծության

Հետազոտության քանակական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած բնակչության միջավայրում կոռուպցիան չի համարվում Հայաստանի Հանրապետությունում առկա ամենասուր հիմնախնդիրը, սակայն մտնում է թվարկված կարևոր հինգ խնդիրների մեջ: Հարցվածների շուրջ 16%-ն այն համարել ամենալուրջ հիմնախնդիրը²: Եթե հաշվի առնենք, որ այն ներառվել է առաջին հնգյակում այնպիսի լուրջ հիմնահարցերի հետ միասին ինչպիսիք են *գործազրկությունը, աղքատությունը, ապրանքների գնաճը* և *ընդհանուր տնտեսական խնդիրները* ու իր կարևորությամբ բարձր գնահատվել նույնիսկ *արտագաղթից*, ապա կարելի է ասել, որ կոռուպցիան ըստ հետազոտության տվյալների Հայաստանի առավել մտահոգիչ բացասական իրողություններից մեկն է:

1.1. Կոռուպցիայի գնահատականը և ընկալումը

Ըստ հարցման արդյունքների կոռուպցիայի վերաբերյալ առավել տարածված գնահատականների համաձայն այն համարվում է *շատ լուրջ խնդիր*: Այդպես է կարծում հարցվողների շուրջ 63.5 %-ը: Նկատենք, որ ոչ մեծ տատանումներով այն լուրջ խնդիր են համարում ինչպես մայրաքաղաքի (56 %), այնպես էլ մարզային քաղաքաբնակ (66 %) և գյուղաբնակ (68 %) շրջանների հարցվածները³: Նկատելի է, որոշ տարբերություն Երևան քաղաքի ու մարզային բնակչության կարծիքների միջև: Սակայն չնայած մոտ 10 % տարբերությանը, նկատի պետք է ունենալ, որ Երևանում նույնպես *կոռուպցիան շատ լուրջ հիմնախնդիր* է համարում հարցվածների մեծամասնությունը:


Հետաքրքիր է, որ *կոռուպցիան շատ լուրջ հիմնախնդիր* գնահատողների թիվը որոշ տատանումներով բարձր է նաև տարբեր կրթական ցենզ ունեցողների միջավայրում (տես՝ *գծապատկեր 1*): Բարձրագույն, միջնակարգ տեխնիկական, միջնակարգ և տարրական կրթություն ունեցողների կարծիքները կոռուպցիայի լրջության վերաբերյալ չնայած որոշ տարբերություններին, բոլոր խմբերում էլ կոռուպցիան լուրջ խնդիր համարողները մեծամասնություն են կազմում: Մա կարող է

². Տես՝ 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, Երևան, 2009, էջ 9, նկար 5:

³. Տես՝ նույն տեղում, էջ 9, նկար 5:

նշանակել, որ կոռուպցիան իրոք այնքան լուրջ ու համատարած խնդիր է դարձել, որ հասարակության բոլոր խավերի կարծիքները դրա վերաբերյալ համընկնում են: Նունիսկ տարրական կրթություն չունեցողների մեջ 45.5 %-ը փաստորեն գիտակցում է իրավիճակի ծանրությունը և գնահատում է կոռուպցիան որպես շատ լուրջ խնդիր:

Գծապատկեր 1. Կոռուպցիայի լրջության գնահատականը ըստ կրթության (%)




Ներկայացված *գծապատկերը* թույլ է տալիս ասել, որ չնայած հասարակության բոլոր խավերն այս հարցի շուրջ ունեն արտահայտված բացասական մոտեցում, սակայն պրոբլեմի լրջության գիտակցման աստիճանը աճում է ըստ կրթական ցենզի:

Այս հարցի մեկնաբանության համար հետաքրքիր պատկեր է տալիս նաև *կոռուպցիան շատ լուրջ, որոշ չափով լուրջ* և *լուրջ չհամարողների* թիվն ըստ ՀՀ ընդհանուր վիճակով բավարարվածության տարբեր աստիճանների (տես՝ *գծապատկեր 2*): Ըստ այդմ, ՀՀ ընդհանուր իրավիճակով *լիովին բավարարվածների* մեջ *կոռուպցիան շատ լուրջ խնդիր* համարողների թիվը կազմում է 53,8 %, ինչը մոտավորապես հավասար է *որոշ չափով բավարարված չեն* պատասխան տվողների մեջ *կոռուպցիան լուրջ խնդիր* համարողների թիվին՝ 54 %: ՀՀ իրավիճակով որոշ չափով բավարարվածների մեջ այդ թիվը կազմում է 59,3 %: Կոռուպցիան լուրջ խնդիր համարողների թիվն ամենամեծն է ՀՀ *իրավիճակով խիստ չբավարարվածների* մեջ՝ 74, 2 %:

Կարելի է նկատել, որ չնայած երկրի վիճակին մոտեցումների տարբերությանը կոռուպցիայի հանդեպ նրանց վերաբերմունքը ցույց տվող տվյալները շատ չեն տարբերվում իրարից և կոռուպցիան շատ լուրջ կամ որոշ չափով լուրջ համարողները բոլոր խմբերում մեծամասնություն են կազմում: Սա կարող է վկայել այն մասին, որ կոռուպցիան իրոք համատարած բնույթ ունի և բոլոր խմբերի կարծիքն այս հարցում հիմնականում համընկնում է:


Գծապատկեր 2. Կոռուպցիայի լրջության գնահատականը ըստ ՀՀ ընդհանուր իրավիճակի գնահատականների



Որոշ առումով տարօրինակ է այն, որ ՀՀ ընդհանուր իրավիճակով լիովին բավարարվածների և որոշ չափով բավարարվածների մեջ այդքան մեծ է կոռուպցիան լուրջ խնդիր համարողների թիվը: Ստացվում է, որ չնայած մարդիկ կոռուպցիան համարում են լուրջ խնդիր, միաժամանակ նաև բավարարված են ընդհանուր իրավիճակով, որը կարելի է բացատրել այնպես, թե կոռուպցիայի լուրջ խնդիր լինելն ըստ այդ մարդկանց բացասաբար չի ազդում երկրի ընդհանուր վիճակով իրենց բավարարված լինելու վրա կամ կոռուպցիան չի ազդում երկրի վիճակի վրա:

Այս մեկնաբանությունը որոշ առումով կարող է լրացվել այն հարցի վերլուծությամբ, որը վերաբերում է կոռուպցիայի բնական երևույթ համարվելուն կամ չհամարվելուն:

Գծապատկեր 3. Համամիտ եք արդյոք, որ ՀՀ քաղաքացիները կոռուպցիան համարում են բնական երևույթ (%)




Հատկանշական է, որ ըստ հարցման ենթարկվածների 27 %-ի կարծիքի ՀՀ քաղաքացիները կոռուպցիան համարում են բնական երևույթ, իսկ 24%-ն էլ որոշ չափով համաձայն է դրան:

Այսինքն, հարցվողների մի զգալի մասի կարծիքով Հայաստանում բնակչության միջավայրում կոռուպցիան համարվում է բնական երևույթ: Իհարկե փոքր չէ նաև նրանց թիվը, ովքեր մասնակիորեն կամ լիովին համաձայն չեն դրա հետ՝ համապատասխանաբար 26 % և 18 %: Սակայն, հարցվածների մեջ կոռուպցիան բնական երևույթ համարելու հետ լիովին կամ որոշ չափով համամիտների նման բարձր տոկոսը ինքնին խոսուն փաստ է:

Մեկ այլ կարևոր խնդիր է կոռուպցիայի ընկալումը, կամ ավելի պարզ ասած, թե ըստ մարդկանց ընկալումների ինչն է համարվում կոռուպցիա: Գծապատկերը ցույց է տալիս, որ բնակչության մեջ հիմնականում կոռուպցիայի ընկալումը համապատասխանում է դրա ընդունված մոտեցումներին և մարդիկ հստակ կարողանում են բնորոշել, թե ինչը պետք է կոռուպցիա համարել և ինչը՝ ոչ:

Գծապատկեր 4. Ձեր պատկերացմամբ արդյոք նշված գործողությունները կարելի է համարել կոռուպցիա




1. Վճարել դատավորին՝ ցանկալի վերաբերմունք/ վճիռ ստանալու համար:
2. Ուստիկանին գումար առաջարկել՝ Ձեր վարորդական իրավունքը չառգրավելու համար:
3. Ուսանողը կամ ուսանողի ծնողը դասախոսին նվեր է տալիս քննությունների օրը:
4. Պետական պաշտոնի չարաշահումն անձնական բիզնեսի համար:
5. Կապերի/ծանոթությունների օգտագործում՝ որևէ մեկին բանակից ազատելու համար:
6. Երբ պետական պաշտոնյանօգնում է բարեկամին բուհ ընդունվել:
7. Փոքր ոչ պաշտոնական վճարումներ կատարել թոշակների ստացման համար:
8. Պետական պաշտոնյաի միջնորդություն բարեկամին որևէ նախարարությունում աշխատանքի տեղավորելու համար:
9. Պետական պաշտոնյայի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումն անձնական կարիքների համար:
10. Հարևանի այգուց ծաղիկ կամ միրգ քաղել՝ առանց վերջինիս թույլտվության:

Այս առումով հասարակական կարծիքում առավել տարածված է կոռուպցիա համարել *դատավորին և ճանապարհային ոստիկանին կաշառելը*: Երկրորդ խմբի մեջ կարելի է միավորել *դասախոսին նվեր տալը, անձնական բիզնեսի համար պետական*

պաշտոնի չարաշահումը, մոտիկ որևէ մեկին բանակից ազատելու համար կապերի/ծանոթությունների օգտագործումը, երբ պետական պաշտոնյան օգնում է բարեկամին բուհ ընդունվել: Երրորդ խմբի մեջ կարելի է դասել թռչակներ ստանալու համար փոքր ոչ պաշտոնական վճարումներ կատարելը, պետական պաշտոնյաի կողմից իր բարեկամին որևէ նախարարությունում աշխատանքի տեղավորելու համար միջնորդելը, պետական պաշտոնյաի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումն անձնական կարիքների համար: Այս գծապատկերը ցույց է տալիս նաև, թե որպես կոռուպցիայի դրսևորում հասարակությունում հատկապես որն է ավելի բացասաբար գնահատվում: Կարելի է ասել, որ ավելի հանդուրժողական մոտեցում կա վերը թվարկած երրորդ խմբի կոռուպցիոն դրսևորումների հանդեպ:

Ինչ վերաբերում է ըստ հասարակական կարծիքի կոռուպցիայի տարածվածության հիմնախնդրին, ապա ներկայացված գծապատկերից ակնհայտ է դառնում, որ առավել կոռումպացված ոլորտները համարվում են առողջապահությունը, ընտրական համակարգեր/գործընթացները, ոստիկանությունը և կրթությունը: Ստորև ներկայացված պատկերն ըստ կոռումպացվածության երեք աստիճանների է:

Գծապատկեր 5. Նշված ոլորտներից որոնք են 1-ին ամենակոռումպացված, 2-րդ կոռումպացված և 3-րդ կոռումպացված ոլորտները




Համաձայն գծապատկերի, առաջին աստիճանի ամենակոռումպացված ոլորտներ են գնահատվել առողջապահությունը (23.1 %), ընտրական համակարգերը (14.7 %), ոստիկանությունը (9.4 %) և կրթությունը (7.4 %): Երկրորդ աստիճանի

կոռումպացվածությամբ հերթականությունն այսպիսին է՝ կրթություն (11.7 %), հարկային ծառայություններ (9.7 %), ընտրական համակարգեր (9.6 %) ու ոստիկանություն (9.4 %): Եվ երրորդ աստիճանում ըստ կոռումպացվածության մակարդակների գնահատականներն այսպիսին են ոստիկանությունը (11.4 %) հարկային ծառայությունը (9.4 %), ընտրական համակարգերը (8.4 %) և ճանապարհային ոստիկանությունը (8.0 %):

1.2. Կոռուպցիոն վարքագծի և դրա պատճառների մասին պատկերացումները

Հետաքրքիր պատկեր է ստացվում, երբ հարցադրումը վերաբերում է կոռուպցիոն վարքագիծ ծնող պատճառներին: Խոսքը վերաբերում է հատկապես այն նրանց, որոնք չնայած գիտակցվում են որպես կոռուպցիա ձևավորող, սակայն արդարացվում են որպես հարցերը լուծելու հնարավոր հիմնական ելք: Մա մի կողմից ցույց է տալիս, թե ինչպես են մարդիկ իրականում վերաբերում կոռուպցիային, մյուս կողմից էլ պարզ է դառնում, որ *մարդիկ կոռուպցիայի իրենց կողմից արդարացվող պատճառները ընկալում են նաև որպես իշխանություն ունեցողների հետ հարաբերվելու ընդունելի եղանակներից մեկը*: Այս առումով ուշագրավ պատկեր է ցույց տալիս մարդկանց մոտ կոռուպցիոն վարքագիծ ձևավորող դրդապատճառները ներկայացնող աղյուսակը:

Գծապատկեր 6. Ձեր կարծիքով որոնք են այն հիմնական պատճառները, որոնք մարդկանց դրդում են կոռուպցիոն վարքագիծ դրսևորելու: Նկատի ունենք այն պատճառները, որոնք մարդիկ նշում են իրենց կոռուպցիոն վարքագիծն արդարացնելու համար (%) (Բազմաթիվ հաճախականություն)




Հարցվածների 61.3 %-ը գտնում է, որ կոռուպցիոն գործողության դիմելու հիմնական պատճառն այն է, որ խնդիրը լուծելու այլ տարբերակ չկա, 46.5 %-ի կարծիքով այն նպաստում է գործերն արագացնելուն, 20.1 %-ն էլ այն համարում է պատժից և տուգանքներից խուսափելու միջոց, իսկ 19.3 %-ի կարծիքով էլ կոռուպցիայի դիմելու միջոցով կարելի է խուսափել ավելի բարձր պաշտոնական վճարումներից: Ուշագրավ

պատասխաններից են նաև *պատշաճ ծառայություն ստանալու* (13.8%) և *արտոնյալ վերաբերմունքի արժանանալու* (13.5 %) մասին պատասխանները: Եթե այս ամենին հավելենք նաև այն, որ հարցվողների մեջ զգալի թիվ (34 %) են կազմում նրանք, ովքեր նշել են, որ կոռուպցիոն գործողության իրեն դրդել են պետական պաշտոնյաները⁴, ապա կարելի է վերն առաջ քաշված թեզը տրամաբանորեն հավանական համարել:

Հետաքրքիր տեսանկյուններ են բացահայտվում նաև կաշառք տալու և վերցնելու հետ կապված հարցերի քննարկման ժամանակ: Կոռուպցիայի դրդապատճառների և կոռուպցիոն վարքագիծ առաջացնող գործոնների մեկնաբանությունը լրացնում է կաշառք տալու պատրաստակամության աստիճանը և դրա հիմնական պատճառները ներկայացնող *գծապատկեր 7-ը*: Կաշառք տալու պատրաստակամություն հայտնաձևների ճնշող մեծամասնության՝ 76.4 %-ի կարծիքով կաշառք տալու հիմնական պատճառն այն է, որ *ծառայություն ստանալու այլ տարբերակ չկա*: Սա բավական համահունչ է նաև կոռուպցիոն գործողություններ ծնող գլխավոր դրդապատճառի հետ և հստակորեն ցույց է տալիս, որ *բնակչությանը կոռուպցիոն գործողությունների ու կաշառքի մղող հիմնական պատճառները թաքնված են իշխանության կողմից հասարակությանը պարտադրվող հարաբերությունների ձևերում և բնակչության կողմից դրանց հանդուրժելիության վարքային մոդելներում*:

Գծապատկեր 7. Կաշառք տալու պատրաստակամության աստիճանը և դրա հիմնական պատճառները




Ներկայացված գծապատկերը ցույց է տալիս նաև, որ պատրաստ են կաշառք տալ հարցվածների 51.1 %-ը: Փոքր չի նաև նրանց

թիվը, ովքեր չէին տա: Սակայն, չնայած դրան նկատենք, որ պոտենցիալ կաշառք տվողների թիվը բավականին մեծ է և հասարակական կյանքի ու կոռուպցիոն վարքի ձևավորման ու վերարտադրության վրա դա կարող է էական ազդեցություն ունենալ: Պատկերն այլ է, երբ հարցը վերաբերում է կաշառք վերցնելու խնդրին: Այստեղ մեծամասնությունը՝ 72 % -ը նշում է, որ ինքն անձամբ կաշառք չէր վերցնի և միայն 21

⁴. Տես՝ սույն աշխատություն, էջ 19, գծապատկեր 15:

%-ն է կաշառք վերցնելու պատրաստակամություն հայտնում⁵: Եթե համեմատենք կաշառք տվողների ու վերցնողների համամասնությունը, իհարկե կաշառք տալու պատրաստակամություն ունեցողները ավելի շատ են, սակայն եթե նկատի ունենանք այն, որ 21 %-կաշառք վերցնելու պատրաստակամությունն էլ բավական լուրջ թիվ է, քանի որ հասարակությունում սովորաբար կաշառք տվողների համամասնությունը վերցնողներից բոլոր դեպքերում շատ ավելին է: Բավական է նկատել, որ մի քանի կաշառք վերցնողը կաշառք տալու գործողության կարող են դրդել հարյուրավոր և նույնիսկ հազարավոր կաշառք տալու տրամադրվածություն ունեցողների:

Հետաքրքիր է նաև դիտարկել կաշառք վերցնելու ու կաշառք տալու պատրաստակամության քանակական պատկերը: Այստեղ 32 % են կազմում նրանք, ովքեր պատրաստ են կաշառք տալ բայց չեն վերցնի, 16 %՝ ովքեր պատրաստ են ինչպես կաշառք վերցնելու, այնպես էլ տալու, 37 % են կազմում նրանք, ովքեր ոչ կվերցնեն ու ոչ էլ կտան կաշառք և ընդամենը 3 % են կազմում նրանք, ովքեր չեն տա, բայց կվերցնեն:




Գծապատկեր 8. Կաշառք վերցնելու և կաշառք տալու պատրաստակամության համադրումը

Թվային այս տվյալները ցույց են տալիս, որ կոռուպցիոն գործողությունների պատրաստ մարդկանց մեջ ավելի մեծ է կաշառք տալու տրամադրվածությունը, քան վերցնելու: Հետաքրքիր է նաև, որ ընդհանրապես կոռուպցիոն գործողություն իրականացնելու հանդեպ կտրուկ մերժողական տրամադրվածություն ունեցողների թիվը համադրման դեպքում կազմում է 37 % այն դեպքում, երբ կաշառք վերցնելու հանդեպ մերժողաբար տրամադրվածների թիվը 72 % է, իսկ կաշառք տալունը՝ 40.9 %: Այսինքն, կաշառք չվերցնելու կամ չտալու տրամադրվածությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ կարծիքն արտահայտած խումբը զերծ է կոռուպցիոն

⁵ Տես՝ 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, էջ 16, նկար 15:

գործողության դիմելու պատրաստակամությունից: Ուշագրավ է նաև, որ կաշառք տալու և միաժամանակ նաև վերցնելու պատրաստակամություն ունեցողները կազմում են 16 %: Այսինքն, այս վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցվածների շուրջ 51 %-ը հակված է այս կամ այն ձևով կոռուպցիոն վարքագիծ ցուցաբերելու: Նկատենք, որ նման տոկոսային հարաբերությունը խոսում է հասարակության մեջ կոռուպցիա ծնող վարքի բավական մեծ տարածվածության մասին:

Վարքագծի հետաքրքիր դրսևորումների մասին են խոսում նաև կաշառք վերցնելու կամ տալու հակված անձանց պատասխանների համադրումը կոռուպցիան լուրջ պրոբլեմ համարելու խնդրի հետ:




Չժապատկեր 9.
Կոռուպցիան լուրջ խնդիր համարողների թիվը կաշառք տալու պատրաստակամություն ունեցողների միջավայրում

Հատկանշական է, որ կոռուպցիան ՀՀ համար շատ լուրջ համարողների մեջ կաշառք տալու պատրաստակամություն ունեցողների թիվը կազմում է 55.4 %, իսկ որոշ չափով լուրջ համարողների մեջ՝ 50.3 %: Նույնը կաշառք վերցնելը մերժողների դեպքում կազմում է 71. 6 % և 70.7 %:

Այս քանակական տվյալները բացահայտում են Հայաստանին բնորոշ հասարակական մի հետաքրքիր իրավիճակ, ըստ որի կարելի է ասել, որ չնայած մարդիկ կոռուպցիան տեսականորեն համարում են լուրջ հիմնահարց, սակայն պրակտիկորեն պատրաստ են իրենց գործողությամբ նպաստել կոռուպցիայի պահպանմանն ու տարածմանը: Մյուս տրամանաբանական հետևությունն այն է, որ մարդիկ չնայած գիտակցում են պրոբլեմը, սակայն դրա դեմ պայքարի և հաղթահարման գործում հաճախ իրենց դերակատարությունը չեն տեսնում: *Ավելին, այս տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ շատերը չեն տեսնում կապ իրենց կոռուպցիոն գործողության ու երկրում խորացող կոռուպցիայի միջև:* Սա շատ հետաքրքիր իրավիճակ է, երբ մարդիկ իրենք փաստացիորեն նպաստում և խորացնում են կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում, սակայն բացասաբար


գնահատելով այն, գտնում են որ դրանց դեմ պետք է պայքարեն ուրիշները: Հատկանշական է, որ այս դատողությունները ամրապնդվում են նաև հակակոռուպցիոն պայքարին վերաբերող տվյալներում:



Գծապատկեր 10.
Կոռուպցիան լուրջ ինչի՞ր համարողների թիվը կաշառք վերցնելը մերժողների միջավայրում

Վարքագծի հետաքրքիր տեսանկյուն բացահայտելու հնարավորություն է տալիս նաև ըստ կաշառք տվողների և չտվողների, կաշառքով գործը գլուխ բերելու մեջ վստահության աստիճանը ներկայացնող գծապատկերը:

Գծապատկեր 11. *Կաշառք տալու օգտակարության հանդեպ վստահության աստիճանը ըստ կաշառք տալու պատրաստակամության վարքի*



Ըստ այդմ, նրանք ովքեր շատ վստահ են, որ կաշառքը կօգնի գործը գլուխ բերելու համար, կաշառք տալու պատրաստակամություն ունեն 56.8 % իսկ 35 %-ը՝

ոչ: Նրանք ովքեր *որոշ չափով են վստահ* նույնը համամասնորեն կազմում է 55.1 % և 37.5 %: *Փորք-ինչ վստահների* մեջ պատկերը հետևյալն է՝ 51 % և 41,6 %, իսկ *բացարձակապես անվստահների* մոտ՝ 60.2 % և 35.5 %: Փաստորեն, նկատելի է, որ մարդիկ կաշառք տալու պատրաստակամությունը ոչ միշտ է, որ ուղեկցվում է գործը գլուխ բերելու լիարժեք վստահությամբ, բայց փաստորեն մարդիկ նորից պատրաստակամ են կաշառքով լուծել իրենց հարցերը, քանի որ ինչպես տեսանք վերը հարցեր լուծելու այլ իրատեսական եղանակներ մարդկանց հայտնի չեն: Ավելին, գծապատկերը ցույց է տալիս, որ նրանք ովքեր որ բացարձակապես վստահ չեն կաշառքով գործը գլուխ բերելու մեջ, ավելի շատ են հակված կաշառք տալու: Մա լրացուցիչ կարող է փաստել, որ չնայած մարդիկ կաշառքը չեն համարում հարյուր տոկոսանոց երաշխիք իրենց խնդիրները լուծելու համար, սակայն այլ ելք չտեսնելու պարագայում ավելի հակված են կաշառքի դիմել քան չդիմել:


1.3. Կոռուպցիոն գործողությունների դրդապատճառների բնույթը

Ներկայացված հարցերի համատեքստում հատուկ կարևորություն է ստանում կոռուպցիոն գործողությունների ձևավորման դրդապատճառների քննարկումը: Ըստ հարցվածների հետ պատահած դեպքերի առավել տարածված կոռուպցիոն երևույթներն են. ա/ *պաշտոնյաի կողմից փող, նվեր, կամ այլ վերաբերմունք ստանալու ակնկալիք ցուցադրելը*՝ որը *հիմնականումն միշտ* է հանդիպել հարցմանը մասնակցածների 18.1 %-ին, բ/ *ուղղակի փող նվեր կամ վերբերմունք պահանջելը*՝ 22.7 %-ին և գ/ *արտոնյալ վերաբերմունք ստանալու համար անձնական կապերն օգտագործելը*՝ 16.4 %-ին: Նկատենք, որ ինքնակամ գումար, նվեր կամ «լավություն» անելուն վերաբերող պատասխանները չափազանց փոքր թիվ են կազմում առանձին դեպքերում տասանվելով 2-5 % -ի միջև: Եթե հաշվի առնենք, որ վերջին մեկ տարում հարցման մասնակիցների ավելի քան 30 %-ը առնչություն չի ունեցել այս կամ այն ծառայությունների և կառավարման օղակների հետ, ապա ներկայացված տվյալները բավական խոսուն պետք է համարել: Նկատենք, սակայն որ հարցվածների հիմնական մասն իր անձնական փորձում կոռուպցիայի դեպքի հետ կամ ընդհանրապես առնչություն չի ունեցել կամ առնչվել է հազվադեպ: Չնայած նկատենք, որ հազվադեպ առնչությունը նույնպես կոռուպցիոն գործողության տարր իր մեջ պարունակում է: Այս առումով ավելի մեծ է ինքնակամ կաշառքի չդիմելու դեպքերը: Ամեն դեպքում գծապատկերից կարելի է հետևել, որ կոռուպցիոն գործողությունների դրդապատճառները պետական պաշտոնյաներն են, այլ ոչ մարդկանց ինքնակամ գործունեությունը:

Այսինքն, իշխանության հետ հարաբերվելու առիթի դեպքում, երբ քաղաքացին խնդիր ունի որևէ հարց իր օգտին լուծելու, հանդիպում է պետական պաշտոնյաի այնպիսի վարքագծի, որը նրան դնում է մի իրավիճակի առջև, երբ նա հասկանում է, որ եթե ինքը չդիմի որևէ այնպիսի քայլի, որով կշահագրգռի այն պաշտոնյաի

հետաքրքիրությունը ումից կախված է իր հարցի լուծում, չի կարող դրական արդյունք ակնկալել: Ուստի, ելքը կոռուպցիոն գործողության միջոցով արգելքներ ստեղծող պաշտոնյային սիրաշահելն է մնում: Հարցի լուծման իրավական ուղիներից շատերը խուսափում են վերը ներկայացված հասարակական մոտեցումների պատճառով:

Գծապատկեր 12 . Պետական պաշտոնյաների հետ առնչվելիս, որքան հաճախակի են Ձեզ հետ պատահել հետևյալ երևույթները⁶




1. Պաշտոնյաները բացահայտ պահանջում են գումար, նվեր կամ որևէ «լավություն»
2. Պաշտոնյաները բացահայտ չեն պահանջում, սակայն ակնարկում են գումարի, նվերի կամ «լավության» մասին
3. Ձեզնից պահանջում են «լավության» անել պետական պաշտոնյայի բարեկամներին
4. Ինքներդ եք գումար տալիս պետական պաշտոնյային
5. Ինքներդ եք նվեր տալիս պետական պաշտոնյային
6. Ինքներդ եք «լավության» անում պետական պաշտոնյային
7. Դուք անձնական կապեր եք օգտագործում արտոնյալ վերաբերմունք ստանալու համար

Հետաքրքիր պատկեր է ստացվում նաև հաջորդ, *գծապատկեր 13-ի* դեպքում: Փաստորեն, ըստ հարցվածների, պետական պաշտոնյաներին կաշառք տալիս առավել հաճախ հանդիպող ձևն այն է, երբ պետական պաշտոնյան ինքն է ակնարկում կաշառք կամ այլ տիպի «լավություն» անելու մասին: Նման կարծիքի է հարցվածների 34 %-ը: Ըստ 15 %-ի քիչ է լինում, որ մարդիկ առանց պետական պաշտոնյաների դրդիչ գործողությունների ինքնակամ կաշառք տան: Շատ հետաքրքիր է նաև, որ հարցվածների 36 %-ի կարծիքով ամենից տարածված է այն, որ

⁶. Գծապատկերում Չգիտեմ կամ Հրաժարվում եմ պատասխանել ցուցող տվյալը ներառում է նաև հարցին Կամավոր, երբեք չեմ առնչվել պատասխանողների տոկոսը:

այս կամ այն գործի կամ խնդրի լուծման դեպքում մարդիկ դիմում են նախապես հայտնի ձևերին և գումարի չափերին: Սա կարող է նշանակել, որ այս կամ այն հարցի լուծման համար կաշառքը և կոռուպցիոն տարբեր գործողություններն այնքան հանրահայտ ու տարածված են հասարակության մեջ, որ մարդիկ պարզապես գիտեն, որ այս կամ այն հարցի լուծման դեպքում իմաստ ունի դիմել միայն կառուպցիոն գործողության նախապես հայտնի ձևերին: Վերջինս ցույց է տալիս, որ կոռուպցիոն գործողությունների շատ ձևեր այնքան տարածված ու հայտնի են հասարակության բոլոր խավերին, որ առանձին դեպքերում կոռուպցիոն գործողությունների մարդկանց մղելու առնձնահատուկ ջանքեր գործադրելու անհրաժեշտություն չի առաջանում և ամեն ինչ լուծվում է հասարակությունում կոռուպցիայի արդեն ինստիտուցիոնալիզացված և բոլորին հայտնի եղանակներով ու վճարման ստանդարտներով:

Գծապատկեր 13. Ձեր կարծիքով պետական պաշտոնյային կաշառք տալիս, ներկայացված տարբերակներից որն է առավել հաճախ հանդիպողը:




Քննարկվող հարցերի շրջագծում հետաքրքիր է նաև դիտարկել կոռուպցիայի մասին հայտնելու վերաբերյալ հասարակությունում առկա կարծիքները և հակակոռուպցիոն վարքագիծ դրսևողների նկատմամբ հասարակությունում առավել տարածված վերաբերմունքի դրսևորումները: Դրա պատկերն արտացոլված է ստորև ներկայացված *գծապատկեր 14*-ում: Համաձայն հարցվածների մեր հասարակությունում կան բնակչության մեջ հակակոռուպցիոն վարքագծի ձևավորումը խոչընդոտող մի շարք պատճառներ: Դրանցում առաջնային է համարվում այն, որ պարզապես *չի խրախուսվում կոռուպցիայի մասին հայտնելը*: Վարքային մոդելների ձևավորման առումով հետաքրքիր պատասխան կարելի է համարել նաև այն, որ հարցվածների բավական ստվար մի հատվածի՝ 37.4 %-ի կարծիքով *կոռուպցիայի մասին կարիք չկա հայտնելու, եթե այն անձամբ իրեն չի*


վնասում: Նկատենք, որ ասվածի զուգահեռները մեզ հանդիպեցին նաև վերը՝ *հակակոռուպցիոն վարքագծին* վերաբերող հատվածում:

Ըստ հարցվողների 46.8 %-ի կարծիքի հակակոռուպցիոն վարքային մոդելների ձևավորումը հասարակայնորեն զսպող կարևոր պատճառներից է նաև այն, որ *կոռուպցիայի մասին հայտնողին կպատժեն:* Սա կարևոր է այն առումով, որ փաստորեն ցույց է տալիս, թե հասարակությունում կոռուպցիայի պաշտպանությամբ շահագրգիռ այնպիսի խավեր կան, որ նույնիսկ պատրաստ են ոչ միայն պարզապես հասարակական կարծիքի ճնշմամբ կանխել մարդկանց հակակոռուպցիոն գործողությունները, այլ ֆիզիկական ճնշումներ գործադրելու և վախի մթնոլորտ ստեղծելու: Ներկայացված գծապատկերից կարելի դատել նաև, որ պատասխանների մի խումբն էլ ոչ այնքան հակակոռուպցիոն վարքագիծը կանխող պատճառներին է վերաբերում, որքան այդ վարքագիծը արդարացնելուն: Մասնավորապես, այն, որ հարցվածների շուրջ 64 %-ը նկատել է, որ նույնիսկ որևէ պատկան մարմնի հայտնելուց հետո որևէ քայլ դրանց կողմից չի իրականացվի, իհարկե ցույց է տալիս այն, որ մարդիկ վստահություն չունեն այն մարմինների հանդեպ, որոնք կոչված են հակակոռուպցիոն պայքար ծավալելու: Մակայն, սրանում կարելի է նաև տեսնել սեփական կրավորական վարքը արդարացնելու ձգտում: Իսկ այն, որ 32.5 %-ի կարծիքով կոռուպցիայի դիմողներն այն անում են տնտեսական պատճառներից դրդված, պարզապես կոռուպցիայի արդարացման փորձ կարելի է դիտարկել, որը մեկ անգամ ևս ցույց է տալիս որ մեր հասարակությունում կոռուպցիայի հանդեպ հակվածությունը և հանդորժողականությունը մեծապես պայմանավորված հասարակությունում դրա նկատմամբ ձևավորված ստերեոտիպերով ու հասարակության մեջ գերիշխող սովորության նորմերով:

Գծապատկեր 14. Թվարկածներից որոնք են կոռուպցիոն դեպքերի մասին համապատասխան մարմիններին չհայտնելու պատճառները



Բնակչության մեջ հակակոռուպցիոն վարքագծի հանդեպ համակերպվածության ու հանդուրժողականության մասին խոսուն ցուցիչ է նաև այն, որ անցած մեկ տարում պետական որևէ պաշտոնյաի դրսևորած կոռուպցիոն գործողության մասին պատկան մարմիններին հայտնողների թիվը չափազանց ցածր է և հարցվածների մեջ կազմում է ընդամենը 1 % (տես՝ *գծապատկեր 15*): Այս ցուցանիշը կարող է պայմանավորված լինել, ինչպես հասարակությունում հարմարողականության վարքային մոդելների արմատավորվածությամբ, այնպես էլ ըստ հասարակական կարծիքի դատաիրավական մարմիններում գոյություն ունեցող կոռուպցիայի բարձր մակարդակի պատճառով⁷ և դրանց հակակոռուպցիոն արդյունավետ գործողություններ գործադրելու շահագրգռվածության վերաբերյալ հասարակությունում առկա խոր անվստահության աստիճանով:




Գծապատկեր 15. Վերջին տասներկու ամիսներին որևէ պաշտոնյաի կողմից կոռուպցիայի դրսևորման մասին հայտնողների թիվը:

Այս հարցի պատասխանը որոշ առումներով արտացոլված է նաև կոռուպցիայի հաղթահարման հարցում ՀՀ կառավարության անկեղծ ցանկությանը և կամքին մարդկանց ունեցած վստահությանը վերաբերող հարցադրման մեջ: Հարցվածների միայն 12 %-ն է լիովին համաձայն, որ ՀՀ կառավարությունը անկեղծ ցանկություն ունի կոռուպցիայի դեմ պայքարելու հարցում: 41 %-ը մասսամբ կամ վերապահումներով է համաձայն, ինչը կարող է նշանակել, որ կոռուպցիոն որոշ դրսևորումների դեմ կառավարությունը որոշ քայլեր ձեռնարկում է, սակայն դրանք լիարժեք չեն հակառուպցիոն պայքար ծավալելու նրա անկեղծությանը և ցանկությանը լիովին հավատալու ու վստահելու համար: Հարցվածների 39 %-ն էլ բոլորովին կամ մասնակիորեն համաձայն չէ այն բանին, որ կառավարությունը հակակոռուպցիոն պայքար ծավալելու անկեղծ ցանկություն և կարողություն ունի:

⁷. 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, էջ 11, նկար 8

Ներկայացված տվյալները խոսում են այն մասին, որ կառավարության հանդեպ վստահության աստիճանը բարձր չէ, սակայն դրական տեղաշարժերի դեպքում կա պատրաստակամություն նրա քայլերը դրական գնահատելու առումով: Այսինքն, կարելի է նաև ասել, որ *հասարակությունում հակակոռուպցիոն տրամադրությունների ձևավորման և տարածման հարցում կարող է լուրջ դերակատարություն ունենալ կառավարության կողմից կոռուպցիան հաղթահարելու ցանկության ու կարողության նկատմամբ հասարակությունում վստահության աճը*: Այսինքն հասարակությունում հակակոռուպցիոն պայքարին մասնակցության աշխուժացումը Հայաստանում կարող է տեղի ունենալ, եթե դրանում առաջին հերթին անկեղծ ցանկություն ու կամք ցուցաբերի կառավարությունը:



Գծապատկեր 16. Որքանով եք համամիտ, որ Հայաստանի ներկայիս կառավարությունը կոռուպցիան հաղթահարելու անկեղծ ցանկություն և կարողություն ունի:

1.4. Հակակոռուպցիոն պայքար և անձնական դիրքորոշում

Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն վարքագծի դրսևորմանն ու նման միջոցառումներին ակտիվ մասնակցության խնդրին, ապա դրա աստիճանը չափազանց ցածր է, ինչի մասին է խոսում կոռուպցիան նվազեցնելու համար անձնական մասնակցություն ցուցաբերելու հարցին տրված պատասխանների պատկերը⁸: Հարցվածների 51 %-ը գտնում է, որ ինքը ոչինչ չի կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար: Հետաքրքիր է, որ այս մոտեցումը եթե փորձենք համադրել վերը բերված այն պատկերին, որ մարդկանց զգալի մասը չնայած համարում են կոռուպցիան լուրջ հիմնախնդիր, սակայն պատրաստ չեն կոռուպցիոն

⁸. 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, էջ 21, նկար 24:

որևէ գործողություն իրականացնելու, մեկ անգամ ևս ամրապնդում է այն եզրակացությունը, որ Հայաստանում շատերը չնայած կարևորում են կոռուպցիայի հաղթահարումը տեսականորեն, սակայն գործնականորեն իրենց գործողություններով նպաստում են կոռուպցիայի պահպանմանն ու վերարտադրությանը: Կարելի է ասել, որ 51 % են կազմում այն մարդիկ, ովքեր կոռուպցիայի հաղթահարումը չեն համարում իրենց գործը: Հատկանշական է, որ այն պատասխանները, որոնք քիչ թե շատ հուսադրող թվային տվյալների են արժանացել հիմնականում ոչ թե ցուցում են կոռուպցիայի նվազեցմանն ուղղված ակտիվ, մասնակցային պայքար, այլ՝ ավելի քիչ ակտիվ: Հարցվողների 35 %-ը նշել է, որ Հայաստանում կոռուպցիայի նվազեցմանը իր անձնական մասնակցությունը կցուցաբերի պետական ծառայությունների դիմաց կաշառք տալուց, իսկ 15 %-ն էլ պաշտոնյաների ազգականներին վերաբերմունք ցուցաբերելուց հրաժարվելու ձևով: Սա որևէ մեկի «խաթրին չդիպչելու» հայաստանյան հասարակությանը բնորոշ վարքային մոդելների արտահայտություններից մեկն է: Սովորաբար նման մոտեցումը վստահություն չի ներշնչում, քանի որ շատերը այդ պատասխանին դիմում են բարոյական նկատառումներով, ինչը սակայն շատ արագ ի չիք է դառնում գործնական քայլերի դիմելու անհրաժեշտության առաջացման դեպքում:


Առավել բնութագրական են ակտիվություն և մասնակցություն պահանջող հարցերի պատասխանները: Այս դեպքերում պատասխանները բոլորովին էլ հուսադրող չեն: Ասենք օրինակ ընդամենը 3 %-ն է իր մասնակցության ձևը տեսնում *կոռումպացված պաշտոնյաի մասին համապատասխան մարմիններին հայտնելը*: Երկուական տոկոս են կազմում կրթական, և ճանաչողական հակակոռուպցիոն արշավներին մասնակցություն ցուցաբերելու պատրաստ մարդիկ: Նույնքան է կազմում նաև կոռումպացված պաշտոնյաների դեմ դատական գործ հարուցելու կամ դրա մասին որևէ ՀԿ-ին հայտնելու պատրաստ մարդկանց թիվը:

Ցածր է նաև հակակոռուպցիոն ուղղվածության ՀԿ-ների, ճանաչվածության աստիճանը: Հարցման մասնակիցների ընդամենը 1.2 %-ն է նշել, որ կոռուպցիայի փաստի մասին տեղեկություն հաղորդելու համար ինքը կդիմեր ՀԿ-ներին: Հատկանշական է, որ հարցվածների մեջ ընդամենը 6 %-ն է տեղյակ հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին: 87 %-ը պարզապես չգիտե դրանց մասին⁹:

Այսինքն կարելի է ասել, որ հասարակությունում բավական ցածր է քաղաքացիական կառույցների, որպես կոռուպցիոնի դեմ պայքարող ազդեցիկ, արդյունավետ ու ունակ ուժերի մասին կարծիքը:

⁹. 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, էջ 22-24, նկարներ 26 և 28:

Գծապատկեր 17. Համաձայն երարոյոք, որ Հայաստանում ՀԿ-ները կարող են պայքարել կոռուպցիայի դէմ:



Չնայած վերը նշվածին, քիչ չեն այնպիսիները, որոնք գտնում են որ ՀԿ-ներն ընդհանրապէս կարող են պայքարել կոռուպցիայի դէմ: Չնայած ՀԿ-ներին վստահողների թիվը մեծ չէ, սակայն *գծապատկեր 17-ը* ցույց է տալիս, որ այն հակակոռուպցիոն պայքարի հնարավոր գործիք դիտողների թիվն ավելի մեծ է:

Սա կարող է նշանակել, որ կազմակերպված, իսնտիտուցիոնալիզացված կառույցների անհրաժեշտությունը որոշ առումով կարևորվում է, սակայն քանի որ ՀԿ սեկտորը Հայաստանում ընդհանրապէս կայացման լուրջ խնդիրներ ունի, այն դեռևս որպէս իրատեսական գործիք չի ընդունվում հասարակությունում: ՀԿ-սեկտորը առանձնապէս վստահություն չի ներշնչում մարդկանց, հիմնականում իր թույլ ու ոչ ազդեցիկ լինելու պատճառով: Այսինքն այն նախ ինքնակայանալու, հասարակությունում իր ճանաչումն ու հեղինակությունը բարձրացնելու խնդիր ունի ունի, ինչից հետո նոր միայն կարող է վեր ածվել արդյունավետ պայքարի գործիքի:

Ավելին, հարցման արդյունքները ցույց են տալիս նաև, որ հարցվածների մի զգալի հատվածի մոտ կան նաև հստակ պատկերացումներ ՀԿ-ների անելիքների մասին, որը վերաբերում է հաճախ կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների, հակակոռուպցիոն օրենսդրության, հակակոռուպցիոն գործողությունների դիմելու ձևերի մասին իրազեկման, կոռուպցիայի դէմ պայքարին առնչվող գիտելիքների տարածման, բնակչությանը հակակոռուպցիոն իրավական աջակցության ցուցաբերման հարցերին¹⁰:

¹⁰. 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, էջ 22-24, նկարներ 26 և 28:

ՄԱՍ 2

Կոռուպցիայի էությունը Հայաստանում և հակակոռուպցիոն պայքարի սկզբունքային որոշ դրույթներ (Մեկնաբանության երկրորդ աստիճան)

Սկզբից նեթ, մեկ անգամ ևս հստակեցնենք, որ *Մեկնաբանության երկրորդ աստիճանը* մեթոդաբանական առումով բացառապես փորձագիտական մեկնաբանության հարթությունն է, որի համար հիմք են ծառայում ինչպես վերը բերված քանակական վերլուծության տվյալները և ընդհանրացումները, այնպես էլ որակական այլ հետազոտությունների տվյալներ և հեղինակի փորձագիտական գիտելիքների պաշարները:

2.1. Կոռուպցիայի հիմնական որակական առանձնահատկությունները Հայաստանում

Դատելով վերը ներկայացված հետազոտական տվյալների վերլուծությունից, կարելի է ասել, որ հասարակության մեջ կոռուպցիան ընկալվում է որպես Հայաստանում արմատավորված, *բնական* մի երևույթ, ինչն հատուկ է պետական կառավարման բոլոր ոլորտներին, սակայն հատկապես իրավապահ մարմիններին, դատախազությանը, ընտրական համակարգի գործունեությունը ապահովող ինստիտուտներին, առողջապահական և կրթական համակարգերին: Պետական կառավարման համակարգում այն տարածված է ոչ միայն լայնությամբ, այսինքն ըստ ոլորտների, այլ նաև ուղղահայացորեն՝ ըստ կառավարման համակարգի հիերարխիկ կառույցի վերից վար բոլոր մակարդակներին՝ սկսած ամենացածրից վեջացրած ամենաբարձրով¹¹:

Հասարակական կարծիքի ուսումնասիրության տվյալներով գերիշխող է այն մտտեցումը, ըստ որի կոռուպցիայի աղբյուրը հանդիսանում են հենց պետական իշխանությունները, քանի որ նրանց գործունեությունը ձևավորում է այնպիսի իրավիճակ, երբ մարդը պետական կառավարման այս կամ այն օղակի հետ առնչվելիս հանդիպում է խոչընդոտների և դրանք հաղթահարելու հիմնական իրատեսական ճանապարհը համարվում է կոռուպցիոն գործողությունների դիմելը: Պատահական չէ, որ հարցվողների միջավայրում կաշառք տալու պատրաստակամություն ունեցողների թիվը (51 %) զգալիորեն ավելի շատ է, քան կաշառք վերցնելու ցանկություն ունեցողներինը (21 %)¹²: Դա պատճառաբանվում է հենց նրանով, որ առանց կաշառքի անհրաժեշտ հիմնախնդրի լուծումն ըստ հարցվածների

¹¹. 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, Երևան, 2009, էջ 10. նկ. 9

¹². Նույն տեղում, էջ 16, նկ. 15:

մեծամասնության կարծիքի կմտցվի փակուղի և չի լուծվի: Խիստ մեծ է անվստահությունը նաև կոռուպցիայի դեմ պայքարի կոչումը կրող այնպիսի կառույցների հանդեպ, ինչպիսիք են իրավապահ մարմիններն ու դատախազությունը, քանի որ ըստ հարցման արդյունքների սրանք առավել կոռումպացված համակարգերից են, հետևաբար և հասկանալի է, որ դրանց դիմելու պարագայում խնդիրը ոչ թե լուծում է ստանալու, այլ ձգձգվելու է ժամանակի առումով և թանկանալու՝ ֆինանսապես: Ուստի և շատերը կառավարման այս կամ այն օղակի հետ հարաբերության դեպքում գերադասում են խնդրի լուծումը հաջողացնել ուղղակիորեն՝ “հարց լուծող” պետական պաշտոնյաի հետ կոռուպցիոն փոխհարաբերությունների ուղղակի կամ միջորդավորված կերպով հաստատման միջոցով, որն ըստ մեր ունեցած դաշտային որակական հետազոտությունների տվյալների, հասարակության մեջ համարվում է ամենից արդյունավետը ոչ միայն ֆինանսական առումով ու դրված խնդիրը լուծելու արդյունավետության տեսանկյունից, այլ՝ նաև սոցիալական կապիտալ ձևավորելու: Վերջինիս տակ հիմնականում հասկացվում է այն ծանոթությունը, որը հաստատվում է կաշառքը տվողի և այն վերցնողի միջև: Երբեմն, գործը վերջանում է ոչ միայն դրամական ձևով կաշառք տալով, այլ նաև կաշառակերի պատվին սեղան գցելով և նրա հետ “ախպերանալով”: Ըստ մեր գրանցած որակական նյութերի, նման անձնական հարաբերության հաստատման ձգտումը պայմանավորված է ոչ այնքան նրանով, որ հաստատված ծանոթությունը կօգնի հետագայում որևէ հարց լուծել անվճար ձևով, այլ որ տվյալ մարդը կունենա ուղղակի կապ “հարց լուծելու” կարողությամբ ու իշխանությամբ օժտված անձի հետ և անհրաժեշտության դեպքում արդեն կկարողանա դիմել նրան ոչ թե միջնորդավորված ձևով, այլ՝ անմիջականորեն: Հատկանշական է, որ հաճախ, կաշառք վերցնելու միջոցով խնդիր լուծելը կաշառքը տվողների կողմից գնահատվում է, որպես իրենց նկատմամբ “լավություն” անել, իսկ կաշառակերը հիշատակվում է որպես “լավ” մարդ: Հատկանշական է, որ նրանք ովքեր խուսափում են կաշառքի միջոցով խնդիրներ լուծելուց և փորձում են հարցերը լուծել օրինականության շրջագծում, հասարակության մեծամասնության կողմից արժանանում են որպես “կյանքը լավ չհասկացողի”, “միամիտի” և ավելի կոշտ ու վիրավորական այլ որակումների:

Այսինքն, կարելի է ասել, որ ինչպես քանակական հետազոտության տվյալները, այնպես էլ որակական հետազոտությունների նյութերը ցույց են տալիս, որ կոռուպցիան Հայաստանում ընկալվում է որպես իշխանության հիմնական որակներից մեկը, ինչը, եթե մարդը դրա հետ հարաբերվելիս նկատի չի ունենում, գնահատվում է որպես ոչ իրատես՝ Հայաստանում ձևավորված իրողություններին ոչ ադեկվատ վերաբերվելու համար: Հետևաբար կարելի է ասել, որ հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում կոռուպցիան ոչ միայն այնպիսի երևույթ է, որը տարածված է կառավարման համակարգում, այլ նաև հասարակական ընկալումներում հաճախ այն դիտարկվում է, որպես հայաստանյան արդի

իրականության համար *բնական* համարվող հիմնական և կարևոր այնպիսի մի հատկանիշ, որի հետ հաշվի չնստելը գնահատվում է որպես իրականությունը համարժեք գնահատելու անկարողություն և թերություն: Պատահական չէ, որ հաճախ մարդիկ կաշառք կամ կոռուպցիոն գործողության դիմելիս կիրառում են հասարակության մեջ լայնորեն հայտնի մոտեցումները և վերաբերմունքի ձևերը և չափերը: Այսինքն, *բնական* ասելով պետք է հասկանալ, որ կոռուպցիան տարածված է ու բնորոշ ոչ միայն կառավարման համակարգում, այլ՝ նաև բավականաչափ ինստիտուցիոնալիզացված հասարակությունում: Կան խավեր ու շերտեր, որ դրան դիմում են ոչ միայն նրա համար որ դա անհրաժեշտ է իր հարցերը լուծելու համար, այլ նաև որ այդպես ընդունված է և որ համապատասխան ձևով չվարվելու դեպքում նրան կհամարեն հասարակության ու իր միջավայրին ոչ համարժեք անդամ, ինչը կարող է նրա ու նաև իր ընտանիքի համար անցանկալի բարդություններ ու որոշակի մարդկանց ու խավերի շրջանակում փոխհարաբերությունների սառնություն առաջացնել: Այսինքն, *կոռուպցիայի հիմնական որակական առանձնահատկությունը Հայաստանում պետք է համարել, որ այն ներկա կառավարման համակարգի բաղկացուցիչ այնպիսի տարրերից է, որի միջոցով այդ համակարգը ապահովում է իր գործունեությունը և մարդկանց վրա իշխանությունը իրացնելու ու վերարտադրելու գործառույթը:*

2.2. Իշխանության ձևավորում և կոռուպցիա

ՀՌԿԿ իրականացրած հետազոտության տվյալներում չափազանց ուշագրավ է այն փաստը, որ ՀՀ պետական համակարգի առավել կոռումպացված ոլորտների շարքում տեղ են գտել *ընտրական գործընթացներն ու համակարգերը*: Նկատի ունենալով այն, որ Հայաստանում ընտրությունների միջոցով են ձևավորվում ինչպես հանրապետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մամինները, ապա դատելով վերը նշվածից, կարելի է ասել, որ ՀՀ-ում կոռուպցիան, արդեն իսկ, առկա է իշխանությունների ձևավորման գործընթացներում: Ցավոք, ճշգրիտ տվյալներ չկան այն մասին, թե որևէ ընտրության ժամանակ ընտրողների քանի տոկոսն է եղել կաշառված, կամ ինչ կոնկրետ դրսևորումներ է ունեցել կոռուպցիան քաղաքական կուսակցություններում, ընտրական գործընթացները կազմակերպող ու իրականացնող վարչական և պետական այլ մարմիններում, սակայն այն, որ հարցվածների շուրջ 66 %-ի կարծիքով ընտրական համակարգերը և գործընթացները համարվում են առավել կոռումպացված և միայն 18 %-ն է կասկածում դրանց կոռումպացված լինելուն¹³, ապա կարելի է ենթադրել, որ կոռուպցիայի

¹³. 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, էջ 13, նկ. 10:

առկայությունն արդեն իսկ իշխանության ձևավորման գործընթացում կառավարման համակարգի կոռուպացվածության բարձր աստիճանը պայմանավորող հիմնարար գործոններից է: Դատելով նրանից, որ կառավարման համակարգերում առկա է կոռուպցիայի բարձր մակարդակ, ապա հասկանալի է դառնում, որ այն ձեռնտու է առաջին հերթին ոչ թե նրանց, ովքեր իրենց խնդիրները լուծելու նպատակով կաշառք են տալիս կամ պատրաստ են կաշառք տալ, այլ այն պաշտոնյաներին, ովքեր ձգտում են պաշտոն ստանալ կոռուպցիոն լծակների տիրանալու և դրանք սեփական ունեցվածքային ու ստատուսային շահերին ծառայեցնելու համար: Ավելին, կարելի է եզրակացնել, որ *ընտրական գործընթացները, որոնք հանդիսանում են Հայաստանում իշխանության ձևավորման հիմնական մեխանիզմը, իրենց կոռուպացվածության պատճառով իշխանության ձևավորման ու վերարտադրության գործընթացը վեր են ածել տարբեր ազդեցիկ խմբակային և օլիգարխիկ բնույթի միավորումների միջև կոռուպցիոն լծակներին տիրանալու պայքարի:*

Հասարակական կարծիքի հետազոտության տվյալները նույնպես թույլ են տալիս եզրակացնել, որ կոռուպցիոն մեխանիզմների կիրառմամբ ձևավորվող իշխանությունը չի կարող չլինել կոռուպացված: Ըստ, հանրային կարծիքում գերիշխող այն տեսանկյան, որ կոռուպցիան մեր իրականության համար անքակտելի, նկարագրական ու բնական համարվող առանցքային բաղադրիչներից մեկն է, փաստորեն, պայմանավորվում է ոչ միայն իշխանություն – հասարակություն փոխհարաբերությունների բնույթը, այլ՝ նաև հասարակական տարբեր խմբերի ու խավերի: Ավելին, այն դարձել է ***հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը, որոշիչ լինելով ինչպես անհատի ստատուսի, այնպես էլ ունեցվածքային կարողության աստիճանը ձևավորելու գործում:*** Այս առումով կարելի է առանձնացնել մեր հասարակությանը բնորոշ երեք խոշոր ստատուսային խմբեր՝

- ովքեր ունեն իշխանության, հետևաբար և, կոռուպցիոն լծակներին տիրապետման կարգավիճակ
- ովքեր անձնական կապեր ունեն և մոտ են կանգնած կոռուպցիոն լծակների կիրառման հնարավորություն ունեցողներին
- ովքեր, զուրկ են կոռուպցիոն լծակներին տիրապետման աստիճանից:

Կարելի է ասել, որ վերը ներկայացվածը այսօր մեր հասարակության հիերարխիկ պատկերը արտացոլող այնպիսի մի կառուցվածք է, որում առաջին երկուսը օգտագործում են իշխանությունը, որպես կոռուպցիոն լծակ՝ իրենց ունեցվածքը, իշխանությունը և կարգավիճակը ձևավորելու, ամրապնդելու ու վերարտադրելու նպատակով, քանի որ կոռուպցիոն լծակը այն տիրապետող անձին ապահովում է.

ա/ իշխանության արտոնյալ մատչելիություն,

բ/ ստվերային ֆինանսական հոսքերի շրջանառությունից օգտվելու արտոնյալ մատչելիություն,

գ/ արտոնյալ կարգավիճակ և գործունեություն ծավալելու հնարավորություն ստեղծող տեղեկատվության մատչելիություն:

Ըստ այդմ, կարելի է ենթադրել նաև, որ Հայաստանում անձի կարգավիճակի փոփոխության հնարավոր առավել իրատեսական ձևը համարվում է դեպի կոռուպցիոն լծակներ տանող ուղիների վերահսկողությունը իրականացնող խմբակային բնույթի միավորումներին անդամագրվելը: Այդպիսի խմբակային միավորումներ կարելի է համարել նաև քաղաքական կուսակցությունները:

Պատահական չէ, որ ըստ փորձագիտական կարծիքների, ընտրությունների կոռումպացումը, մասնավորապես ընտրակաշառքների բաժանումն ու վարչական ռեսուրսների կիրառումը իրականացվում է վերը նշված երեք խմբերից առաջին երկուսի ջանքերով, քանի որ դա կոռուպցիոն լծակների վերահսկողությունը, հետևաբար է իրենց ունեցվածքային ու սոցիալական ստատուսի պահպանումն ու վերատադրությունը ապահովող հիմնական գործիքներից է:

Կարելի ասել, որ Հայաստանում և նմանտիպ երկրներում, կոռուպցիան դա հասարակական կյանքի հիերխիան պայմանավորող այնպիսի մի մեխանիզմ է, որը ձևավորվում և վերարտադրվում է իշխանության լծակները տիրապետող խմբերի կողմից՝ սեփական ստատուսի և հարստության պահպանման ու վերարտադրության նպատակով:

2.3. Կոռուպցիա և հնարավորությունների բևեռացում

Դատելով հասարակական հարաբերությունների և կարգավիճակային աստիճանակարգի ձևավորման վրա կոռուպցիայի ունեցած ազդեցությունից, կարելի է ասել, որ կոռուպցիան անմիջական ազդեցություն ունի հնարավորությունների անհավասարության և բևեռացման խորացող իրավիճակի վրա: Այն, դրա վրա ազդում է երկուստեք: Նախ, ըստ հարցման տվյալների, բավական տարածված է այն կարծիքը, որ կոռուպցիան արգելափակում է մարդկանց անհրաժեշտ այս կամ այն խնդիրը լուծելու ուղիները: Այսինքն, կարելի է ասել, որ կոռուպցիան սահմանափակում է մարդկանց հնարավորությունները և շատերը չեն կարողանում լիարժեքորեն օգտվել իրենց հասանելիք անհրաժեշտ ծառայություններից, լուծել իրենց համար կարևոր հարցեր, որոնց լուծմանը տանող ճանապարհը գտնվում է այս կամ այն պետական հաստատության մեծ կամ փոքր պաշտոնյաի ձեռքում: Այդ պաշտոնյան, փաստորեն, տիրապետելով իշխանության այնպիսի լծակի, որի միջոցով անարգել կարող է կասեցնել քաղաքացուն անհրաժեշտ հարցի լուծումը, ստիպում է նրան դիմել կոռուպցիոն գործողության, որի ձևերն, ըստ հարցման տվյալների շատ դեպքերում

մարդկանց նախապես արդեն հայտնի են: Վերն արված տվյալների վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ կոռուպցիոն գործողությունների քաղաքացիներին հաճախ դրդում են պետական տարբեր աստիճանի պաշտոնյաները իրենց կողմից իրականացվող քայլերով և ցուցաբերվող վարքով: Ուղղակի փող, նվեր կամ այլ տիպի “պարզ” պահանջելն ավելի քիչ, բայց ոչ այդքան հազվադեպ հանդիպող իրողություն է: Համաձայնենք, որ եթե հարցվածների շուրջ 23 %-ը նշում է, որ պաշտոնյաները իրենց ուղղակիորեն պահանջել են փող կամ այլ նյութական փոխհատուցում, ապա դա բավականին բարձր ցուցանիշ է: Դա նշանակում է որ հարցվածներից յուրաքանչյուր 4-ը ինչ-որ հարց լուծելիս հանդիպել է նման նախադեպի: Իսկ եթե դրան ավելացնենք, որ տարածված է նաև այն, որ պետական պաշտոնյաներն ինչ-ինչ ձևերով հասկացնել են տալիս կաշառքի, նվերի կամ իրենց շահամուլությունը շոյող այլ “վերաբերմունք” ցուցաբերելու մասին, ապա ընդհանրացնելու դեպքում, որոշակի է դառնում, որ իշխանության կոռուպացվածությունը մարդկանց հնարավորություններն ու ազատությունները խոչընդոտող լուրջ գործոն է և այդ հնարավորությունը գոնե մասնակիորեն վերականգնելու միակ միջոցը Հայաստանում դարձել է կոռուպցիոն գործողության դիմելը: Ակնհայտ է, որ հնարավորությունների սահմանափակումների են ենթարկվում կոռուպցիոն լծակների չտիրապետող և իշխանության մատչելիություն չունեցող հասարակական խավերը:

Կոռուպցիան, բացի *հնարավորությունների սահմանափակման* վերը նկարագրված հատկանիշից ունի նաև *հնարավորությունների բևեռացում* ձևավորելու հատկանիշ: Եթե հարցման մասնակիցների 61.3 %-ը գտնում է, որ կոռուպցիայի հիմնական դրդապատճառն այն է, որ “գործը գլուխ բերելու այլ ուղի չկա”, կամ 46.5 %-ի կարծիքով այն արագացնում է գործընթացները, ապա պետք է եզրակացնել, որ կան “գործը գլուխ բերելու” կամ արագացնելու հնարավորություն ունեցողներ, կամ ժողովրդի մեջ ընդունված արտահայտությամբ “հարց լուծողներ”, ումից կախված է մնացածի գործերը հաջողելու կամ ընթացքը արագացնելու հարցը: Ստացվում է այնպես, որ *նրանք, ովքեր որ տիրապետում են կոռուպցիայի հնարավորություն ընձեռող իշխանական լծակների, նրանք որոշում են նաև այլոց հնարավորություն տալու կամ չտալու հարցը և հետևաբար իրենք ունեն մեծ հնարավորություններ*: Պատահական չէ, որ ըստ մեր փորձագիտական դիտարկումների, հաճախ բնակչության մեջ այս խնդիրներին առնչվող կարծիքներում առանձնահատուկ կարևորվում են հենց հնարավորությունները: Ունենալ մեծ հնարավորություններ նշանակում է տիրապետել իշխանության կամ կոռուպցիոն հզոր լծակների: Մենք պատահական չենք համարժեք նշանակություն տալիս իշխանությանն ու կոռուպցիային, քանի որ հարցվածների զգալի մասի կարծիքով իշխանությունը կոռուպացված է: Ուրեմն, կարելի է եզրակացնել նաև, որ իշխանության լծակը դա նաև կոռուպցիայի լծակ է: Այս առումով *կոռուպցիան բացի նրանից, որ հանդիսանում է իշխանության մատչելիությունը սահմանափակող գործիք և իշխանության մատչելիության սահմանափակման միջոցով սահմանափակում է նաև մարդկանց*

հնարավորությունները, միննույն ժամանակ նաև իշխանության մատչելիություն ունեցողների համար ծառայում է որպես իշխանությունը չարաշահելու և սեփական հնարավորությունները անօրինականորեն ընդլայնելու միջոց: Ստացվում է այնպես, որ կոռուպցիան մի կողմից, նվազեցնում է բնակչության հիմնական մասի հնարավորությունների վերին սահմանը, մյուս կողմից ընդլայնում իշխանության համակարգում գտնվողների հնարավորությունների սահմանները՝ **խորացնելով հնարավորությունների բևեռացումը:**

Ընդհանրապես այս հիմնախնդիրը մեզանում քիչ կարևորվողներից է: Ավելի շատ կարևորվում է կոռուպցիոն մասնակի դրսևորումներ ցուցադրաբար բացահայտելու ու պատժելու պրակտիկան, ինչն ըստ էության առանձնապես որակական ազդեցություն չի ունենում կոռուպցիայի *կենսագործունեության* վրա: Մենք պատահաբար չենք օգտագործում *կենսագործունեություն* բառը, քանի որ Հայաստանում կոռուպցիոն համակարգը ապրում և զարգանում է որպես օրգանական այնպիսի մի ամբողջություն, որը հաղթահարելու համար պետք է ընդհանրապես փոխել հասարակական ու պետական զարգացման կոնցեպտուալ հիմքերը:

Վերադառնալով հասարակությունում հնարավորությունների բևեռացման վրա կոռուպցիայի ազդեցության խնդրին, պետք է ասել, որ այն ուղղակիորեն առնչվում է մի երևույթի, որը մարդկային զարգացման կոնցեպցիայի համատեքստում կոչվում է հնարավորությունների անհավասարություն և հնարավորությունների աղքատություն: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում կոռուպցիայի տարածվածությունը ծայրահեղ ծավալներ ունի: Եթե հարցվածների 63 %-ն է գտնում, որ կոռուպցիան Հայաստանում լուրջ խնդիր է, այլ ոչ ասենք 10-15 %-ը, կամ գոնե մինչև 25%-ը, ապա սա նշանակում է, որ գործ ունենք հասարակական կյանքի վրա կոռուպցիայի ազդեցության լրջագույն հիմնախնդրի հետ: Իսկ եթե դրան հավելենք նաև այն, որ կոռուպցիոն գործողության դիմելը դարձել է “գործը գլուխ բերելու” համարյա թե միակ ուղին, ապա *կոռուպցիայի մասին կարելի է խոսել որպես ոչ միայն հնարավորությունների բևեռացման, այլ՝ նաև բնակչության մի զգալի խավի մեջ հնարավորությունների աղքատության ձևավորման պատճառի մասին:* Այն, որ կոռուպցիան Հայաստանում ձևավորում է հնարավորությունների աղքատություն, վկայում են նաև բազմաթիվ որակական հետազոտություններ¹⁴: Հատկանշական է, որ հնարավորությունների անհավասարությունը կամ աղքատությունը որակական հետազոտությունների տվյալների համաձայն հաճախ դառնում են նաև հնարավորությունների աճի ակնկալիքներ ունեցող և դրանք Հայաստանում իրականացնելն անհնարին համարող անձանց արտագաղթելու պատճառ¹⁵: Այսինքն, կոռուպցիայի տարածվածության աստիճանը, որի հետևանքում ընդլայնվում են

¹⁴ . Պատմություններ աղքատության մասին, Գիրք 2, Երևան, 2007:

¹⁵ . 2002-2008 թթ. Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն, Երևան, 2008, էջ 62: Արտագաղթը Հայաստանից, Երևան, 2003, էջ 26-36:

իշխանության հետ անձնական կապեր ունեցող շրջանակների հնարավորությունները և սահմանափակվում նման կապեր չունեցողներինը, դարձել է մարդկանց գործունեություն ծավալելու և իրացվելու հնարավորությունների սահմանափակման լուրջ խոչընդոտ, առանց որի որևէ երկիր չի կարող զարգացման իրատեսական հեռանկարների ակնկալիքներ ունենալ:

Ըստ էության, կոռուպցիան, որպես հնարավորությունների սահմանափակում և հնարավորությունների բևեռացում ձևավորող երևույթ, դարձել է երկրի հիմնական ռազմավարական ռեսուրսի՝ մարդկային ռեսուրսի զարգացման և տնտեսական, քաղաքական, մշակութային ու հասարակական կյանք ստեղծագործորեն ներդրվելու ու հավելյալ արժեք ձևավորելու լրջագույն խոչընդոտ: Սա նշանակում է, որ երկար շարունակվելու դեպքում Հայաստանում պարզապես կամրապնդվեն այսպես կոչված *կախյալ կապիտալիզմի* հատկանիշները և ինքնուրույն զարգացման անկարողությունը կդառնա երկրի հիմնական բնորոշիչ հատկանիշը: Դրա հետևանքում սովորաբար տվյալ երկրում իշխանությունը դառնում է կոռուպցիոն մեխանիզմների ու լծակների ամբողջություն կազմող այնպիսի մի համակարգ, որի գործունեության նպատակը երկրում առկա բոլոր ռեսուրսների նկատմամբ բնակչության մատչելիության սահմանափակումն է, ի շահ իշխանություն ունեցող “արտոնյալների” ոչ մեծ շրջանակների, իսկ պետությունը դառնում է ոչ թե հասարակական բարիք, այլ՝ չարիք:

2.4. Սոցիալական կապիտալ և կոռուպցիա

Հարցման արդյունքներին ծանոթանալիս մեր ուշադրությունը գրավեց մի հետաքրքիր փաստ: Չնայած նրան, որ հարցվածների 63 %-ը կոռուպցիան համարում է Հայաստանի առջև ծառայած լուրջ խնդիր, հարցվածների մեջ բավական ցածր է կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումներին և գործողություններին մասնակցության աստիճանը: Այսպես օրինակ, հակակոռուպցիոն մի որևէ իրական գործողության մասնակցելու կողմնակիցների թիվը տարբեր դեպքերում տատանվում է 2-3 %-ի սահմաններում: Շատ ավելի ցածր է տարբեր բնույթի հակակոռուպցիոն միջոցառումներին նախկինում մասնակցածների թիվը: Հատկանշական է, որ վերջին 12 ամսվա ընթացքում կոռուպցիոն գործողություն ցուցաբերած պետական պաշտոնյաի մասին հարցվածների միայն 1 %-ն է հայտնել որևէ պետական մարմնի կամ կազմակերպության: Հակակոռուպցիոն իրական ակտիվության նման ցածր մակարդակի պատճառները տարբեր են: Հատկանշական է մասնավորապես այն, որ հարցվողներից շատերը նմանտիպ գործողությունից իրենց հետ պահելու հիմնական պատճառներից մեկը համարել են այն, որ մեր *հասարակությունը չի ողջունում կոռուպցիայի մասին հայտնողներին*: Սա շատ ուշագրավ պատասխան է, քանի որ մեր ունեցած որակական նյութերը ցույց են տալիս, որ հասարակության մեջ տարածված խմբակային արժեքները և դրա հիման վրա գործող թաղային և այլ փակ

տիպի արժեհամակարգերը ծայրահեղ անհանդուրժողական են այն մարդկանց կամ խմբերի հանդեպ, ովքեր փորձում են դուրս գալ փակ համակարգի դեմ¹⁶: Կոռուպցիան, ինչպես վերն արդեն նշվեց, հասարակության մեջ իր իշխանությունը հաստատած *փակ* տիպի խմբակային համակարգերի համար գործունեության ու վերարտադրության կարևոր միջոց է դարձել:

Դրա զարգացման հնարավոր հեռանկարների տեսանկյունից, էական նշանակություն կարող է ունենալ այն, թե ինչպիսին է տվյալ հասարակությունում գործող սոցիալական կապիտալի բնույթը: Եթե այն հիմնականում հենվում է ավանդույթների ու ստերեոտիպերի վրա, ու փակ բնույթի է, ապա կարող է խթանիչ դեր խաղալ կոռուպցիայի զարգացման համար:

Առաջին հայացքից տարօրինակ է դիտվում, երբ չնայած այն բանին, որ բարձր է կոռուպցիան բացասական երևույթ գնահատողների թիվը, բարձր է նաև դրա մասին պատկան մարմիններին հայտնողների նկատմամբ անհանդուրժողականության աստիճանը: Այդպիսիների հանդեպ հաճախ ցուցաբերվում է բացասական վերաբերմունք և տրվում սուր որակումներ:

Մեր ազգագրական դիտարկումները ցույց են տալիս, որ դրա պատճառներից մեկն այն է, որ այսօր հայաստանյան էթնոմշակութային միջավայրում գործուն են ազգակցական կամ հարևանական թաղային համայնքներին բնորոշ ավանդութային ու ստերեոտիպային նորմերը, որոնք իրենց բնույթով գլխավորապես պատրիարխալ են և կապվում են փակ համակարգերին հատուկ տղամարդկային պատվի կողեքսի հետ: Հայաստանում, հատկապես թաղային միջավայրերում այն ձեռք է բերել նույնիսկ քրեական փակ համակարգերին բնորոշ կողեքսի առանձին տարրեր, որտեղ տղամարդու համար օրենքին դիմելը համարվում է պախարակելի թերություն ու արատ, քանի որ դիմելով օրենքին անձը դեմ էր գնում ավանդույթով (կամ այսպես ասած խմբային միջավայրի համար միակը ճշմարիտը գնահատվող “ճշտույ”) խնդիրը լուծելուն: Թաղային ու ազգակցական միջավայրում այսօր էլ խիստ բացասական վերաբերմունք կա այն մարդկանց հանդեպ, որոնք կարող են գրված օրենքները գերադասել չգրվածին: Եթե, այս համատեքստում դիտարկենք այն, որ հարցման մասնակիցների մեջ նույնպես զգալի թիվ են կազմում այն կարծիքն հայտնողները, ըստ որոնց կոռուպցիայի մասին հայտնելը մեր հասարակությունում դատապարտվում է միջավայրի կողմից, ապա կարելի է ենթադրել, որ հասարակությունում առկա գրված և չգրված օրենքների հիման վրա կառուցվող վարքային մոդելները գործում են նաև կոռուպցիայի պարագայում: Եվ չնայած, որ մարդը կարող է դատապարտել կոռուպցիայի երևույթն ընդհանրապես, սակայն

¹⁶ . Ա.Թադևոսյան, Հայաստանում արժեքային կողմնորոշումների ազդեցությունը հանրային կապիտալի ձևավորման գործընթացին, ”21-րդ Դար” հանդես, Երևան, 2004, # 2 էջ 43-45:

կոնկրետ իրադրությունում ձեռնպահ է մնում կոռուպցիան կանխարգելելու կամ դրա դեմ պայքարելուն ուղղված տարբեր միջոցառումներին անձնական մասնակցություն ցուցաբերելուց՝ հասարակությունում տարածված էթնոմշակութային նորմերի ու ստերեոտիպերի ազդեցությամբ: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանյան հասարակությունում գրված և չգրված օրենքների կիրառության ստերեոտիպային մոդելները էականորեն են ազդում հատկապես.

- մարդկանց իրական հակակոռուպցիոն դիրքորոշման ու վարքագծի միջև անհամապատասխանությունների ձևավորման վրա
- կոռուպցիայի դեմ պայքարի հասարակական մթնոլորտի ձևավորման վրա
- կոռուպցիայի դեմ պայքարի հասարակական շարժումների ձևավորման վրա
- կոռուպցիայի վերաբերյալ տեսական անհանդուրժողականությունը գոնե տարրական հարցերում գործնականի վերածելու վրա:

Հարցվածների մեջ զգալիորեն տարածված է նաև այն կարծիքը, ըստ որի կոռուպցիայի մասին հայտնող մարդիկ կարող են ոչ միայն ենթարկվել բարոյահոգեբանական բնույթի ճնշումների, այլ նաև ֆիզիկական հաշվեհարդարի, կամ դառնալ վրեժի զոհ: Սա նշանակում է, որ ըստ հասարակական կարծիքի, կոռումպացված շրջանակներն ունեն մարդկանց վրա ազդելու և նրանց վարքը կողմնորոշելու ինչպես **էթնոմշակութային բնույթի լծակներ** (խոսքը վերաբերում է օրինապահ մարդկանց հասարակայնորեն պախարակիչ որակավորման /կլիշեավորման/ ենթարկելու ձևերին և որպես պիտակավորվածներ, նրանց հետ հարաբերությունների սառեցմանը կամ ընդհանրապես դադարեցմանը), այնպես էլ՝ **ֆիզիկական բռնության** գործադրմանը: Նկատենք, որ էթնոմշակութային գործոնը, փաստացիորեն հարցման մասնակիցների զգալի մասի կողմից համարվում է հասարակության կոռուպցիոն վարքը ռեգուլյացնող երևույթ, քանի որ շատերը հենց հասարակության մեջ գործող ստերեոտիպային վերաբերմունքի պատճառով է, որ զսպում են իրենց հակակոռուպցիոն դիրքորոշումը:

Եթե փորձենք կոռուպցիոն երևույթները և սոցիալական կապիտալի միջև կապերը քննարկել նաև մարդկային զարգացման տեսանկյունից, ապա պատկերը կարող է էլ ավելի լարված բնույթ ստանալ, քանի որ այս դեպքում սոցիալական կապիտալի ֆունկցիոնալ իմաստավորման շրջագիծն էականորեն փոխակերպվում է: Խոսքը վերաբերում է այն բանին, որ *սոցիալական կապիտալի* տակ հասկացվում է մարդկային փոխհարաբերությունների կանոնակարգման բոլոր այն ձևերը, նորմերը ավանդույթներն ու սովորույթները, որոնք նպաստում են գործունեության և ռեալիզացման բոլոր ոլորտներում մարդկային կապիտալի ներդրմանը և աճին: Այս պարագայում գործունեության բոլոր ոլորտները ստանում են մարդու համար իրացվելու հնարավորություններ ձևավորելու ու ընդլայնելու

նպատակաուղղվածություն: Այսինքն, **սոցիալական կապիտալ** ասելով բովանդակային առումով կարելի է հասկանալ մարդու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնմանը նպաստող ու ծառայող միջավայրը, իսկ նեղ առումով ցանկացած հաստատություն, կազմակերպություն կամ կառույց, որը լինելով այդ միջավայրի բաղադրիչը ծառայում է մարդու ստեղծագործորեն իրացվելուն ու այդ ճանապարհով հասարակայնորեն օգտակար հավելյալ արժեքի ձևավորմանը: Ահա այս կոնտեքստում է, որ կոռուպցիան կարող է իմաստավորվել ու մեկնաբանվել, որպես զարգացումը արգելակող կամ սահմանափակող երևույթ, իսկ կոռուպցիոն բնույթի հասարակական փոխհարաբերությունները դրսևորումները և դրա համար հիմքեր ձևավորող էթնոմշակութային սովորույթներն ու նորմերը կորցնում են սոցիալական կապիտալի իրենց նշանակությունը: Այսինքն, *կարելի է ասել, որ հասարակական կյանքի այն բոլոր մշակութային ու սոցիալական բաղադրիչներն ու բաղկացուցիչները, որոնք ձևավորելով գործուն, ազդեցիկ, հարգի (պրեստիժային) ու հեղինակային (ավտորիտար) կառույցներ (ստրուկտուրաներ), որոնք սակայն չեն նպաստում անհատի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու ռեալիզացմանը, մարդկային զարգացման տեսանկյունից չեն կարող համարվել սոցիալական կապիտալ:*

Հստակեցնելով *սոցիալական կապիտալ* հասկացությանը մեր մոտեցումը նշենք նաև, որ ընդհանրապես *սոցիալական կապիտալ* կարող է համարվել կայունացած հարաբերության կազմակերպման ու իրացման այն ձևերը, որոնց միջոցով տվյալ հանրույթը ինքնակազմակերպվում է իր կողմից կենսական գնահատվող խնդիրները լուծելու համար: Իսկ մարդկային զարգացման տեսանկյունից սոցիալական կապիտալ ասելով հասկանում ենք մարդու ունակությունների ու ստեղծագործական մղումների բացահայտման, իրացման և հնարավորությունների ու ազատությունների աճին նպաստող մարդկային հարաբերությունների և դրանց կարգավորման ու կազմակերպման ձևերը: Այս առումով կարելի է ասել, որ կոռուպցիոն երևույթները ոչ միայն չեն կարող գնահատվել որպես սոցիալական կապիտալ, այլ՝ հակառակը ստանում են հակարժեքի իմաստավորում:

Այսինքն կարելի է ասել, որ *կոռուպցիան համատարած բնույթ ստանալու հակվածություն կարող է ստանալ այնպիսի հասարակություններում որոնցում սոցիալական կապիտալը գերազանցապես բնութագրվում է փակության հատկանիշներով:* Միննույն ժամանակ, այդ կոնտեքստում կոռուպցիոն վարքագիծը պայմանավորող նորմերն ու ավանդույթները, կարող են կոռուպցիան ոչ միայն հանդուրժելի դարձնել, այլ ադապտացնել սոցիալ-մշակութային միջավայրին, դարձնելով դրա բաղադրիչներից մեկը և վերածել հանրույթի հասարակական կյանքի էթնոմշակութային բաղկացուցիչը: Եթե կոռուպցիան ձեռք բերի ավանդույթի բնույթ, ապա այդ հասարակությունում առանց կոնցեպտուալ լրջագույն տրանսֆորմացիաների կոռուպցիայի դեմ պայքար պարզապես հնարավոր չէ, քանի որ այն դառնում է ոչ միայն կառավարման համակարգի, այլ ողջ հասարակական ու

Էթնոմշակութային համակարգի բնութագրական տարրն ու կենսակերպի բաղկացուցիչը: Այս դեպքում արդեն կոռուպցիայի դեմ պայքարն առանց էթնոմշակութային ընդունված ավանդույթների ու ստերեոտիպերի հաղթահարման շատ բարդ կլինի իրականացնել:

Մեկ այլ դժվարություն այս առումով կարող է առաջացնել կոռուպցիայի վերացման մեջ շահագրգռվածություն չունեցող վերնախավը, որը կարող է **հակակոռուպցիոն վարքագծի հանդեպ վերաբերմունքի գնահատականները ազգայնականացնել, հակակոռուպցիոն վարքագծի “ազենտներին” որակելով որպես ազգայինի դեմ ունեցածություն անող արտաքին աշխարհի գործակալներ:**

Կունկրետ այս հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում զարգացման նման հեռանկարի վտանգը բավական լուրջ է: Իհարկե, կան որոշ սփոփիչ ու հուսադրող տվյալներ: Ասենք, օրինակ այն, որ չնայած բավական մեծ թվով մարդիկ նշում են, որ ներկայում իրենք չեն մասնակցի ակտիվ հակակոռուպցիոն գործողությունների, քանի որ հասարակությունում շատ ուժեղ են նման վարքագիծ ցուցաբերողների նկատմամբ բացասական որակումներն ու վերաբերմունքը, սակայն ապագայում կմասնակցեն: Ոչ մեծ վստահությամբ կարելի է ասել, որ սա թույլ կարող է տալ ենթադրել, թե հավանական է, որ արդյունավետ սոցիալական տեխնոլոգիաների ներդրման դեպքում նրանք ակտիվանան և հասարակությունը ինքը դառնա հակակոռուպցիոն պայքարի հիմնական դերակատարը: Եթե նկատի ունենանք նաև կոռուպցիայի վերաբերյալ բացասական դիրքորոշում արտահայտած հարցվածների մեխ թիվը, ասվածի հավանականությունը ավելի է բարձրանում:

Նկատենք որ ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, *այն հասարակությունները, որոնցում սոցիալական կապիտալի ձևավորումն ու վերարտադրությունը չի ընթանում մարդկային զարգացման կոնցեպցիայի շրջագծում ու տրամաբանությամբ, դրանցում կարող են սոցիալական կապիտալի գործառույթ իրականացնել այնպիսի ավանդույթներ ու սովորույթներ, որոնք կարող են գնահատվել որպես կոռուպցիոն երևույթներ կամ կոռուպցիա ծնող գործոններ:* Հատկանշական է, որ գոյատևման կամ զարգացման այլ ռազմավարության համատեքստում, նույն երևույթները ընկալվելով որպես ավանդույթ, ձևավորում են արժեքային համարժեք ընկալումներ

2.5. Հնարավորությունների բևեռացում և մարդկային զարգացում

Հնարավորությունների բևեռացման վրա կոռուպցիայի ազդեցության շուրջ վերը արված մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ կոռուպցիան ազդելով հասարակության կառուցվածքի վրա, նպաստել է լայն առումով բնակչությանը “արտոնյալների” և “ոչ արտոնյալների երկու մեծ խմբերի բաժանելուն:

“Արտոնյալները” հիմնականում կոռումպացված իշխանական խավերն են, ովքեր կարողանում են ծառայեցնել պետական իշխանության ընձեռած հնարավորությունները իրենց մերձավոր խմբակային կամ ազգակցական շրջապատին: Բնակչության մնացած հատվածները, արտանյալ խավերի ճնշման պատճառով, հիմնականում զրկված են ցանկացած տեսակի ռեսուրսներից օգտվելու լիարժեք հնարավորությունից: Եվ ստացվում է այնպես, որ հնարավորությունների բևեռացումը տեղի է ունենում անօրինական կերպով “արտոնյալների” հնարավորությունների ընկայնման և նույնքան անօրինական կերպով մյուսների հնարավորությունների ու ազատությունների արգելափակման հետևանքում: *Իրավիճակն էլ ավելի է բարդանում, երբ այս ամենին գումարվում է հասարակությունում ազատ արտահայտվելու ու ռեալիզացվելու գիտակցված պահանջմունքի չափազանց ցածր մակարդակը և նման պահանջմունք ունեցող անհատների խիստ սակավաթիվությունը:* Ըստ արտահայտման ազատությանը նվիրված որակական հետազոտության տվյալների, բնակչության մեջ շատ ավելի տարածված է ապահովված ու պաշտպանված լինելու պահանջմունքը, քան ազատ արտահայտվելու ու իրացվելու¹⁷: *Էթնոմշակութային բնույթի նման արժեքային գերակայությունը ավելի շատ հակվածություն է առաջացնում ռացիոնալ ավտորիտարիզմի ու հովանավորչության, քան ազատության ու ինքնարտահայտման պահանջի:* Իսկ սա իր հերթին նպաստում է կոռուպցիոն գործողությունների դիմելու միջոցով սեփական ապահովության ու պաշտպանվածության երաշխավորմանն ուղղված քայլերի, քան իր արտահայտման ազատությունը և հնարավորությունների աճը կաշկանդող իրողությունների դեմ պայքարելուն ու խոչընդոտների հաղթահարմանն ուղղված ակտիվության:

Կարելի է ասել, որ ըստ էության Հայաստանում կոռուպցիայի գլխավոր պատճառներից մեկն էլ հենց այն է, որ բնակչության հիմնական զանգվածի համար “իշխանության մարդը” դառնալն ու այդպիսիների հետ լավ հարաբերություններ հաստատելը անհատի ու նրա ընտանիքի պաշտպանվածության ու ապահովության առանցքային երաշխիքներից է համարվում: Խնդիրն այն է, որ *կոռումպացված պաշտոնյաների կողմից մարդկանց կոռուպցիոն գործողության մղելու տեխնոլոգիան նույնպես հենված է հայաստանյան էթնոմշակութային միջավայրին բնորոշ պաշտպանվածության ու ապահովության ստերեոտիպային վարքային մոդելի տարածվածության վրա:* Ըստ մեր անցկացրած որակական հարցազրույցների, ինչ-որ հարցով պետական չինովնիկին առնչվող քաղաքացու առջև բարդությունների ստեղծումը, աստիճանաբար նրա մոտ առաջացնում է անպաշտպանվածության զգացում: Մարդն հասկանում է, որ իր հարցը լուծելու համար իրեն հովանավոր է պետք, որի դերում կարող է հանդես գալ այդ նույն պաշտոնյան, կամ համակարգի մեկ

¹⁷ Արտահայտման ազատության մասին ՀՀ հասարակության պատկերացումները. Սոցիոլոգիական հետազոտություն , Եվրասիայի համագործակցության հիմնադրամ, Երևան, 2009 :

այլ ներկայացուցիչ, եթե նրան համարժեք “վերաբերմունք” ցուցաբերվի: Քաղաքացու ու պաշտոնյաի միջև կոռուպցիոն համաձայնության կայացումից հետո, պաշտոնյան հանդես է գալիս որպես “հարց լուծող” հովանավոր, ում հասարակական տարածված գնահատականների համաձայն, ընդունված է որակել որպես “լավ մարդ”:

Այսինքն, այն, որ հայաստանյան հասարակությունում շատ ավելի ցածր արժևորում ունի ազատությունը, քան պաշտպանվածությունը նպաստում է, որ մարդիկ իրենց դեմ հառնող կոռուպցիոն վարքագծի մղող պաշտոնյաների դեմ անհաղորժողաբար տրամադրվելու փոխարեն, ավելի հակված լինեն ընդունել նրանց խաղի կանոնները և դիմեն կոռուպցիոն համագործակցության:

Կոռումպացված իշխանական համակարգի և դրա հետ բնակչության գերակշռող հատվածի մոտ առկա համագործակցության պատրաստակամության պատճառով Հայաստանում ձևավորվել է մի իրավիճակ, երբ մարդու համար իրացվելու ավելի մեծ հնարավորություն է ստեղծում “փակ” տիպի որակները, քան՝ “բաց”: Նման իրավիճակի ձևավորումը պայմանավորված է նաև Հայաստանյան էթնոմշակութային մի շարք իրողություններով, մասնավորապես սոցիալական կապիտալի գերազանցապես “փակ” բնույթով և պահպանողականությամբ: *Այդ պատճառով սոցիալական շարժունության ու հաջողության հասնելու առավել մեծ հնարավորություններ այսօր ՀՀ-ում ստանում են այն մարդիկ, ովքեր անկախ իրենց կրթական ու մասնագիտական որակավորումից շահագրգռված են “փակ” համակարգի համար նշանակալի սոցիալական ու մշակութային կապիտալների վերատադրության համար:*

Նկատենք, որ կոռուպցիայի սոցիալ-մշակութային նպաստավոր նախադրյալների ձևավորման գործում, ինչպես վերը նկատեցինք նշանակալի է հայաստանյան մշակութային համատեքստի և մշակութային կապիտալի որակների դերակատարությունը: Ի դեպ “փակ” համակարգի որակները տարածվել են ամենուր՝ սկսած պետական կառավարման մարմիններով, վերջացրած առողջապահական, կրթական, տնտեսական, մշակութային ու հասարակական ոլորտներ: Այս ամենի հետևանքում, բավական անշահավետ վիճակում են հայտնվել մարդիկ, ովքեր առավելապես “բաց” որակների կրողներ են: Այդպիսիներն, ըստ էության, եթե չեն հարմարվում և յուրացնում “փակ” համակարգի նորմերը, ապա ենթակա են մեկուսացման տարբեր աստիճանների, ընդհուպ մինչև աշխատանքից հեռացում, ֆիզիկական ճնշումներ և վերջին հաշվով հաճախ նաև արտագաղթ Հայաստանից դեպի այնպիսի երկրներ, որոնցում տիրապետում են մշակութային ու սոցիալական կապիտալի գերազանցապես “բաց” որակները: Այսպիսով կարելի է ասել, որ ***ՀՀ-ում բնույթով փակ խմբակային տիպի սոցիալական կապիտալի որակները նպաստավոր հող են ստեղծում կոռուպցիայի, որպես իշխանության հետ հարաբերության կազմակերպման, ձևավորված մեխանիզմի վերարտադրության համար:*** Միևնույն ժամանակ իշխանական լծակներ տիրապետող “արտոնյալների” խավի կողմից իրենց

հնարավորությունների աճի հսկայական հնարավորություններ ընձեռող կոռուպցիոն մեխանիզմների համատարած տարածվածության հետևանքում սոցիալական կապիտալի “փակ” բաղադրիչներում ներմուծվում ու հարմարեցվում են կոռուպցիոն վարքի մոդելներ, որոնց կիրառումը սովորական մարդկանց համար երաշխավորում է իշխանավորի “բարյացակամ” վերաբերմունքը և հարցի լուծումը: Կարելի է ասել, որ տարիների ընթացքում կոռուպցիոն երևույթները սերտաճել են սոցիալական կապիտալի դեր կատարող էթնոմշակութային “փակ” նորմերին և ձեռք բերել “բաց”, հատկանիշներ ունեցող անձանց, ինչպես և մշակութային, տնտեսական, քաղաքական, հասարակական երևույթներին հակադիր և մերժողական որակներ: Այսինքն, կոռուպցիան ըստ էության տարիների ընթացքում աճելով և տարածվելով կառավարման համակարգում, ներագդել է նաև բնակչության մեջ գործող նորմերի վրա և դրանք ադապտացրել կոռուպցիայի շնորհիվ իրենց “արտոնյալ” կարգավիճակ ձևավորած խավերի շահերին: Դրա պատճառով կոռուպցիոն վարքագիծը վեր է ածվել բնակչության մեջ լայնորեն տարածված երևույթի և դարձել նաև էթնոմշակութային համալիրի բաղադրիչ:

Այսպիսով, կարելի է ասել, որ կոռուպցիան լինելով խմբակային բնույթի, “փակ” հարաբերությունների ու նորմերի արմատավորման ու վերարտադրության որոշիչ նախադրյալներից մեկը, վեր է ածվել Հայաստանում մարդկային զարգացումը կաշկանդող երևույթի, արգելակիչ դեր կատարելով մարդու հնարավորությունների ու ազատությունների աճի, հավասարության ու կառավարմանը մասնակցության տեսանկյունից: Կոռուպցիայի տարածվածության հետևանքում սոցիալական կապիտալի խմբակային բնույթի փակ որակներն, ըստ էության լրջորեն սահմանափակում են մարդկային որակյալ կապիտալի կուտակման հնարավորությունները, քանի որ կոռուպցիոն մեխանիզմների միջոցով խոչընդոտում են գործունեության տնտեսական, մշակութային, քաղաքական ու հասարակական ոլորտներ մարդկային կապիտալի ներդրվելու ու իննովատիվ գործունեության միջոցով հավելյալ արժեք ձևավորելու հնարավորությունները:

Կոռումպացված բյուրոկրատական համակարգի կողմից գործունեության հիմնական և որոշիչ ոլորտներ մարդկային որակյալ, իննովատիվ ու “բաց” բնույթի կապիտալի ներդրման, շրջանառության ու կուտակման անբարենպաստ ու անհավասար պայմանների ձևավորման պատճառով խաթարվել են նաև մարդկային զարգացման տեսանկյունից նշանակալի որակներ ունեցող “բաց” բնույթի սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացները:

Փաստորեն, կարելի է ասել, որ կոռուպցիան Հայաստանում տարածված լինելով կառավարման համակարգի բոլոր օղակներում և ունենալով մարդկանց հնարավորությունների սահմանափակման ու բևեռացման հատկանիշներ, միևնույն ժամանակ սերտաճել է հասարակական հարաբերությունների կարգավորման

գործառույթ իրականացնող էթնոմշակութային բնույթի նորմերին: Նշվածի հետևանքում բնակչության մեջ արմատավորվել են կոռուպցիոն վարքի տարածման ու խրախուսման դերակատարում ունեցող վարքային մոդելներ և սոցիալական կապիտալի փակ բնույթի որակներ: *Այս ամենի հետևանքում զգալիորեն կաշկանդվել են մարդկային զարգացման տեսանկյունից բաց ու իննովատիվ որակներով բնորոշվող մարդկային կապիտալի կուտակման գործընթացները և “փակից” “բաց” սոցիալական կապիտալի տրանսֆորմացման հնարավորությունները, ինչը վեր է ածվել մարդու հնարավորություններն ու ազատությունները և, ընդհանրապես, մարդկային զարգացումը խոչընդոտող երևույթի:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ամփոփելով վերն իրականացված երկաստիճան մեկնաբանության հիման վրա կատարված վերլուծությունը կարելի է անել մի քանի հիմնական եզրակացություններ, որոնք բնութագրում են Հայաստանում կոռուպցիայի բնույթը, հասարակական ընկալումները և մարդկային զարգացման վրա կոռուպցիայի ազդեցությանը:

Ըստ այդմ կոռուպցիան գնահատվում է որպես լուրջ խնդիր, որը կասեցնում է Հայաստանի զարգացումը, սպառնալով դառնալ ընդհանրապես երկրի ինքուրույն զարգացումը վտանգող երևույթ: Կոռուպցիան բնորոշ է իշխանական համակարգի բոլոր օղակներին ինչպես լայնությամբ, այնպես էլ խորությամբ:

Կոռուպցիան ունի համակարգային բնույթ և այն իրականացնում է իշխանության և հասարակության փոխհարաբերությունները կազմակերպող և կարգավորող մեխանիզմի դերակատարություն, որտեղ իշխանությունը դիտվում է որպես կոռուպցիոն լծակ, իսկ իշխանության համար պայքարը կոռուպցիոն լծակների տիրապատման համար մղվող պայքար:

Կոռուպցիան ունի նաև հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքը և գործընթացները պայմանավորող բնույթ, քանի որ դրա միջոցով ձևավորվում է մարդկանց հնարավորությունների անհավասարություն, բևեռացում և նույնիսկ աղքատացում: Դրա հետևանքում տեղի է ունենում բնակչության հիմնական զանգվածի հնարավորությունների անօրինական սահմանափակում և փոքրաթիվ, բայց արտոնյալ հատվածի հնարավորությունների անօրինական ընդլայնում: Վերջինիս հաշվին տեղի է ունենում կոռուպցիոն լծակների տիրապետող և դրանց մոտ կանգնած շրջանակների հասարակական և ունեցվածքային կարգավիճակի աճ և հասարակության մյուս խավերի վրա ազդեցության մեծացում:

Այս առումով կոռուպցիան դարձել է Հայաստանում մարդկային ունակությունների իրացման ճանափարհով առաջընթացի ու սոցիալական շարժունության մեծագույն խոչընդոտ, որը թույլ չի տալիս, որպեսզի երկրի ներսում ընթանան մարդկային որակյալ կապիտալի կուտակման այն աստիճանի ինտենսիվության գործընթացներ, որոնք կարող են երաշխավորել զարգացման առաջանցիկ ու կայուն պրոցես: Սա նշանակում է, որ *կոռուպցիան դարձել է մարդկային զարգացումը կասեցնող երևույթ*, որը վտանգավոր է դառնում նաև երկրի ինքնուրույն զարգացման ու ինքնիշխանության պահպանման տեսանկյունից:

Բնակչության մեջ տարածված վարքային մոդելները, հիմնականում պայմանավորված լինելով ազգակցական ու թաղային բնույթի սովորութային նորմերով ու ստերեոտիպերով հանգեցնում են “փակ” որակներով սոցիալական կապիտալի վերարտադրությանը, ինչն ինքնին կոռուպցիայի համար նպաստավոր հասարակական ու էթնոմշակութային միջավայր է առաջացնում:

Հասարակությունում, պետք է նկատել ոչ առանց լուրջ հիմքերի, բավական ցածր է քաղաքացիական կառույցների, որպես կոռուպցիայի դեմ պայքարող ազդեցիկ, արդյունավետ ու ունակ ուժերի մասին կարծիքը: Դրանք չունեն հեղինակություն, ճանաչում, քանի որ ըստ էության ազդու չեն և հիմնականում չեն կարողանում լուծել մարդկանց համար գործնական նշանակություն ունեցող հարցերը:

Չնայած ընդհանուր առմամբ մարդիկ կոռուպցիան տեսականորեն համարում են լուրջ պրոբլեմ, որի դեմ պետք է պայքարել ու վերացնել, իրենք անձամբ ոչ միայն պատրաստ չեն հակակոռուպցիոն գործողություններ իրականացնելու, այլ նաև անհրաժեշտության դեպքում հակված են կոռուպցիոն վարքագծի դրսևորման:

Չնայած դրան դրական պետք է համարել այն, որ թեկուզ տեսականորեն, բայց ապագայում շատերը պատրաստ են հակակոռուպցիոն քայլերի:

Սա նշանակում է, որ եթե հասարակական, քաղաքացիական սեկտորում իրականացվեն բավականաչափ ներդրումներ, ինչպես տեխնոլոգիական բնույթի (ներառյալ իննովատիվ, սոցիալական ու տեղեկատվական տեխնոլոգիաները), այնպես էլ ֆինանսական, չի բացառվում, որ հակակոռուպցիոն վարքային մոդելներն ավելի ամրապնդվեն: Այս առումով հատկապես պետք է ուսումնասիրվեն և բացահայտվեն այն ոլորտները, որտեղ մարդկանց շահերն ավելի զանգվածայնորեն ու ուղղակիորեն են արտահայտված և այդտեղ հակակոռուպցիոն պայքարի հավանականությունն ավելի մեծ է:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կոռուպցիոն գործողություններ և կոռուպցիա ծնող հիմնական դրդապատճառները գտնվում են իշխանական համակարգում, որը գործում է մարդկանց հնարավորությունների սահմանափակման մեխանիզմով և կոռուպցիոն գործողությունների դրդման միջոցով նրանց հնարավորությունների իրացման արգելափակումները մեղմելու ճանապարհով: Այսինքն, իշխանական համակարգը այսօր կոռուպցիայի ձևավորման ու վերարտադրության մեջ շահագրգիռ գլխավոր կողմն է, որն իր բնույթի պատճառով ի վիճակի չէ իրականացնել հակակոռուպցիոն արդյունավետ ծրագրեր ու պայքար:

Հետևաբար կառավարությանը չի կարելի համարել կոռուպցիայի դեմ պայքարի հուսալի դերակատար և առավել հեռանկարային պետք է համարել կոռուպցիայի դեմ պայքարի դերակատարների փնտրել հասարակական ու քաղաքացիական սեկտորներում:

Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել այնպիսի նախագծերին, որոնք նպաստում են սոցիալական “բաց” որակի կապիտալի ձևավորմանը, որը կարող է կոնսոլիդացնող և խթանիչ դեր կատարել քաղաքացիական այնպիսի կառույցների ձևավորմանն ու աշխուժացմանը, որոնց գործունեությունը կարող է

կոռուպցիայի հանդեպ հասարակական անհանդուրժողականության գործնական մթնոլորտ ստեղծել:

Չափազանց էական է մարդկանց պաշտպանվածության պահանջմունքի բավարարումը քաղաքացիական ոլորտ տեղափոխելուն ուղղված ծրագրերը: Մասնավորապես խոսքը վերաբերում է նրան, որ մարդը ոչ թե ավելի արդյունավետ համարի իրեն ճնշող պաշտոնյաի հետ ստիպված գործարքի գնալը, այլ իր իրավունքը պաշտպանող ու հարցերը լուծող հովանավորներ գտնի քաղաքացիական կառույցներում:

Կարևոր է այնպիսի միջոցառումների ու ծրագրերի իրականացումը, որոնք մարդկանց համար “հարց լուծելու” ակտերնատիվ ու իրատեսական հնարավորություններ կձևավորեն և աստիճանաբար կփոխեն “հարց լուծելու” ստերեոտիպային այն մոտեցումներն ու դերակատարներին, որոնք կոռուպցիոն են:

Առանցքային նշանակություն ունի հակակոռուպցիոն պայքարին կոնցեպտուալ նոր մոտեցման որդեգրումը: Մասնավորապես խոսքը վերաբերում է հակակոռուպցիոն պայքարին մոտենալ, որպես մարդկային հնարավորությունների ու ազատությունների սահմանափակումների դեմ տարվող պայքար, որի արդյունքում հասարակության “բաց” ու իննտվատիվ որակներով անհատներն ու կազմակերպությունները ավելի լայն հնարավորություններ կստանան գործունեություն ծավալելու ու իրացվելու համար: